Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

Min.
BV
50
E7V18

B
0
0
0
0
0
7
0
9
3
8
UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2017-11-07 10:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

DR. K.M. KHANTAMOUR
ARMENIAN COLLECTION

University of California Library Los Angeles

Generated on 2017-11-07 10:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2017-11-07 10:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՆԵԽԱՐՔ

ՆԱԽՆԵԱՑ

Ա.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2017-11-07 10:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2017-11-07 10:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

MHC
BV
50
E7V18

ԱԶԳ

ՁՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ամբողջական գրչագիր երկոց իւրաքանչիւր Մատենագրի թողով ապաստան 'ի յաջողուածս բարեպատեհ ժամանակի և ձեռնտուութեան Ազգայնոց՝ բարձրք վարկանիմք գէթ 'ի բազում ճառից և 'ի Բանից իւրաքանչիւր Հեղինակի առնուլ զմին կամ զերկուս և հետզհետէ ածել 'ի լոյս միոքը դըրիւք ընդ անուամբս ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ։

Ահա՛ յայս առաջին նուագ, բաղդատութեամբ երկուց գրչագիր օրինակաց, ընծայեմք 'ի վայելս հասարակաց զԲան Վահրամայ Վարդապետի 'ի Յայսմաւուրքն Տէառն և Օծման Լէառնի Արքայի Հայոց, վստահ լինելով թէ ո՛չ անախորժ ընթերցանելեաց թուիցի սա, իբրեւ սրատաշարժ պարզունակութեամբ զարթուցանելով 'ի միտս զքաղցր յիշատակ թագաւորութեան առաջնոցն մերոց Հայածին Արքայից։

1982631

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2017-11-07 10:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2017-11-07 10:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՎԱՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԱՏԵՆԱԴՊՐԻ
ԼԵՒՈՆԻ ԱՐՔԱՅԻ
ԲԱՆ
Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ
ԵՒ
ՅՕԺՈՒՄՆ ԼԵՒՈՆԻ
Գ. ԱՐՔԱՅԻ

«Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի և հանգիցէ Ի վերայնորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան և հանճարոյ, Հոգի խորհրդոյ և զօրութեան, Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան, եւ լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ»։ Եսայ. ԺԱ. 1—3։

Սկիզբն *ամենայն տօնից տէրունականաց Աստուածայայտնութեանս տօն է, յորում յայ-*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուսը յայտնեցաւ Աստուած մարդ ծննդեամբ 'ի միշտ կուսէն, որ էրն, և միշտ էն 'ի միշտ էէն՝ 'ի վերս քան զբան, եղեալ մարմին տիրապէս և մնացեալ մարմին իսկապէս. զմերս առեալ ստուգապէս և զիւրն պահեալ անյեղապէս։ Բանն վասն մեր մարմին եղեալ և ոչ փոխադրեալ, 'ի մարմին միացեալ և անշփոթ մնացեալ. ոչ բաժանեալ և ոչ այլայլեալ։ Այլ 'ի կուսէ ծնեալ և մարդ կատարեալ երեւեալ, յերկրի ինքն Աստուած եւ մարդ խոստովանեալ։ Զամենայն ինչ զմարդկան անախտաբար կամաւորապէս կրեալ եւ զնոսին ազնուականութիւն ինքեամբ 'ի մեզ վերագրեալ, եւ ոչ ինչ նմա 'ի կրիցն տիրեալ. այլ գերագոյն նոցին 'ի կրելն կացեալ. ծնեալ՝ և յանիծիցն զմեզ գնեալ. ընծայեալ՝ և զընութիւնս մեր Հօր Աստուծոյ նուիրեալ։ Մկրտեալ՝ և զմեզս մեր Յորդանանու լուացեալ. զփառակիցն իւր զՀոգին ընկալեալ՝ և զնոյն առատապէս 'ի մեզ բաշխեալ. լոյս 'ի խաւար աշխարհի ծագեալ՝ և զմէգ մթութեան մեղայ մերոյ փարատեալ. կենարար վարդապետութեամբ զհոգիս մարդկան լուսաւորեալ՝ և աստուածային սքանչելեօք զմարմինս մեր վերանորոգեալ. 'ի բարձրութիւն Խաչին ամբարձեալ, և նովաւ յերկինս զմերս բնութիւն բարձրացուցեալ։ Յարուցեալ՝ եւ գլուխ մեր գոլով ամենայն

Generated on 2017-11-07 10:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

մարդկային բնութիւնս ընդունելի հօր ներ-
տեալ։ Եւ այսպէս Որդին Աստուծոյ՝ Որդի
մարդոյ եղեալ և զմարդկան որդիս ինքեանք
որդիս Աստուծոյ վերաստեղծեալ։ Յորոց օրհ-
նութիւն միշտ և երկրպագութիւն նմա, որ
զայս շնորհ 'ի մեզ կատարեաց։

Արդարև. "Ո՞խօսեցի զզօրութիւնս Տեառն
և լսելի տուայց զամենայն օրհնութիւնս նորա"։
Ճշմարտապէս, "Այսօր է՝ զոր արար Տէր,
եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք 'ի սա-
մա"։ Օրհնեսցուք զառաքեալն 'ի Հօրէ, որ
օրհնեաց զմեզ յերկնաւորն օրհնութիւն՝ որ
ոչ անցանէ։ Երգեսցուք երգ նոր Աստուծոյ
մերոյ, որ նորոգեաց այսօր զմարմին խոնարհ-
հութեան մերոյ ըստ նմանութեան փառաց
իւրոց։ Բարեբանեսցուք զԱստուած 'ի ոքանչելիս
արքութեան նորա, որ նորահրաշ ծննդեամբ իւ-
րով յարոյց զաղքատս յերկրէ և բարձր արար
զտառապեալս յաղբեւաց։ Մեծատղէս գոհա-
բանեսցուք ընդ հովուացն այսօր զՀովիւն
քաջ՝ որ նստի 'ի Քերովբէս, և եկն 'ի իրն-
դիր բնութեանս մերոյ մոլորեալ ոչխարի եւ
թափեաց 'ի բերանոյ յանուանեալն առիւծու
զբլթակ ուռկան նախատօրն չարաչար լսե-
լութեամբ, եւ զոտս Ղեւիսահօրն՝ ան-
պատշաճաբար 'ի ծառն ընթացողութեան։
Եւ ցնծութեամբ ընդ մեծին Դաւթի ասե-
լով, "Տէր հովուեսցէ զիս", որպէս ողբա-

Generated on 2017-11-07 10:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ցաք երբեմն ընդ նմա գոչելով թէ. «Տահ հով-
ուեացէ զնոսա»։ Ընդ մոգուցն ոսկւոյն և խն-
դրկին և զմռսոյն՝ ընծայեացուք նմա պատ-
ուասիրաբար իբրեւ երկնաւոր արքայի՝ ըղ-
խոհականութիւն և զմաքրութիւն սրտի. իբր
Աստուծոյ՝ զանուշահոտութիւն վարուց մերոց,
առաւել քան զկնդրկի՝ և զմեռելութիւն բա-
ցագործելով, որ 'ի մեզն է ախտից, յաղագս
սիրոյ այնմ՝ որ 'ի վերայ մեր մեռաւ և յա-
րեաւ, ընդ ամենայն արարածս արագեացուք
առաւելեալք 'ի պաշտօն նմա, որ առաւել
քան զամենեսեան բարերարեալք եղաք 'ի նմա-
նէ։ Առցուք ջուր ուրախութեան յաղբերացն
փրկութեան 'ի մարգարէից անտի և յառա-
քելական ձայնից, որք հրաշացուցին զաւուրս
պատիւ՝ որոց պարակից եղեալ աստուածաբա-
նութեամբ նոցին հնչմանց, մանաւանդ տե-
սանողին զբարձրագոյնն և բարբառողին ըղ-
հրաշալիս Եսայեայ որդւոյն Ամովսայ, որ 'ի
խորհուրդ աւուրս լուսոյ խօսի ասելով։

Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ,
և ելցեն ամենայն մարգարէք, որք ծաղկեցան 'ի
տանն Իսրայելի. բազմման և բազմօրինակ
բանիւք խօսեցան վասն փրկագործ տնօրէնու-
թեանց Որդւոյն Աստուծոյ, մանաւանդ յաղա-
գըս ծննդեան՝ որ 'ի սրբոյ կուսէն։ Եւ թէ
զտեսութիւն իւրին ընդ վարագուրաւ բանին
ծածկեցին, ընդ այս մի ուրուք միտք տկարա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գոյնս խորհեցին։ քանզի նոքա ըստ ժամանակին և ըստ կարողութեան լսողացն զբանն պատշաճեցուցանէին։ Զի որպէս 'ի գառնն ըստաւերական՝ առ այնմ ժամու թագուցեալ կայր գառնն ճշմարտութեան, եւ 'ի մանանայն՝ որ յերկնից՝ հացն կենդանութեան, և 'ի ջուրն, որ բղխեալ 'ի վիմէն։ Արիւնն կենարարին 'ի կողէն, եւ 'ի գաւազանն ծաղկեալ Ահարոնին՝ գաւազանն բողբոջեալ 'ի յարմատոյ անտի Յեսսեայն։ այսպէս և յարդարոցն մարմնաւոր բանս՝ ծածկեալ կայր խորհուրդս մեր լուսաւորութեան։ Վասն հրէական ազգի տկարամտութեան և առ 'ի գիրն միայն լպրշութեան։ զորս թողցուք իբրեւ զմեռեալս հոգւով և մեք մաղթեսցուք ընդ մեծին Դաւթի ասելով։ "Բա՛ց զաչս իմ և նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց։" որով 'ի նոյն հոգւոյ օժանդակեալ, տեսցուք օգակաւուք զյոլովագոյն ծածկեալ իմաստս, որ է 'ի բանս առաջի եղեալ մեր։ Ո՛չ զյոլովագոյնս 'ի մտածութեանցն 'ի մէջ առնլով, և ոչ ճոխ ընդարձակ բանիւ զասացեալսն մերձ գնելով։ քանզի առաջի կայ մեր և վասն այլ եւս խորհրդածութեան ընդ սմին խօսիլ։ վասն որոյ զի մի ընդ յոլովաբանութեամբ պարսաւանօք անկցուք։ Համառօտ յաղագս մարգարէական բանիս խօսեսցուք՝ որ ասէ։ Բղխեսցէ գաւազան յարմատոյն։ Յանմարմնաբար ծնելոյն 'ի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հօրէ, զմարմնական ծննդենէն՝ որ 'ի Մարիամայ սրբոյ կուսէն ճառել կամելով մարգարէն, բղխել՝ զնոյն վերագոչէ։ Ըստ որում Եղիսաբէթ զծնունդ սրբոյ կուսին, ապառողորոմայնի նորա օրհնաբանէր։ Իսկ հրեշտակն զնոյն ասէաւէր. «Որ 'ի նմա ծնեալն է՝ 'ի Հոգւոյն Սրբոյ»։ և թէ. «Ծնցի որդի», և սոյն մարգարէ որ ասաւ բղխումն կոչէ, զնոյն դարձեալ և ծնունդ անուանէ. «Ահա կոյս յղասցի և ծնցի որդի», և թէ. «Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ»։ Այսու զբարձրագոյն խորհուրդն մեզ ասանդելով՝ ծննդեամբն զծնեալ 'ի սրբոյ կուսէն անդուստ 'ի նորին բնութիւնէ նշանակելով գոլ ճշմարտապէս, և բղխմամբն և ապաղմն՝ զանախտաբար և զաւանց սրաստոյ յայտնեալն 'ի Մարիամայ ցուցանելով իսկապէս Գանզի և զառաջինն ծնունդ, որ անմայր 'ի Հօրէ՝ այսպէս Գիրք Աստուածային յայտնաբանեն։ Ծնունդ որպէս և է, զնա զանազանեն ըստ բանին՝ որ 'ի Հօրէ առնա թէ. «Ցարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ»։ Եւ դարձեալ 'ի հայրապետանն սրտէ 'ի Հօրէ բղխեալ զբանն վերահաշակեն ըստ առ 'ի Հօրէ բարբառոյն թէ. «Բղխեացէ սիրտս իմ զբան բարի»։ Ոչ թէ այսու բղխումն 'ի Հօրէ զՈրդին ցուցանեն, զի այս Հոգւոյն է յատուկ առանձնաւորութիւն. այլ որպէս ըստ Հոգին Սուրբ՝ որ բղխումն է 'ի Հօրէ՝ ծնունդ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զնա Գիրն կոչէ, ըստ որում Սողոմոն մեծն՝ Սիրածին զնա անուանէ, այսպէս, եւ զԾընեալն զՄրգի բազխու�՝ ի Հօրէ պատմաբանէ. որպէս զի ծննդեամբն զանութեան եւ սկզբութիւնն ընդ Հօր զՄրգոյ եւ զՀոգւոյն յայտնեացէ՝ ի նորին գոլ յեռութենէ ։ Եւ բազմամամբն զանախտութիւնն եւ զառանց ջարշարանաց եւ հրամանն զելուսն գուշակեացէ ։ Այլ ըստ առանձնաւորութեանն՝ զՄրգի ծնունդ միշտ եւ զՀոգի՝ բազխուսն՝ ի Հօրէ առանձնաւորութեամբ ըստ յատկութեանն բանի նոյն աստուածային Գիրք քարոզէ ։ Այնպէս եւ զմարմնոյն ծնունդն՝ բազխուսն՝ ի կուսէն մարգարէն ասէ ։ Ի նոր կարագրութենէ ասոյ յայտնի է, զի ոչ ըստ Հրէից՝ ի Դաւիթ կամ յԵզեկիայ վերաբերի ։ Զի թէպէտ յարմատոյ անտի Յեսսեայ էին նոքա, սակայն եղեալք էին և թագաւորեալք, յորժամ մարգարէն զքանս ճառէր և այս զառյապայան և զլինելոյն իրաց խօսի, որ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս կատարի ։ Դիակ եթէ ժպրհեսցի՝ զ՝ի Զօրաքաբէլ լուծանել զքանս իբր թէ դեռ ևս բղխելոց էր, զհետ եկեալքն ոչ ևս, ձեռնտու լինին և ոչ պատշաճագոյն, զի ուր եհար նա զերկիր բանիւ բերանոյ իւրոյ և կամ երբ առ նովաս գայլք և գառինք՝ ի միասին ճաշակեցան ։ Ըստ որում Քրիստոս Աւետարանական բանիւն վար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բեալ՝ վանեցաց զամենայն երկրաւոր և զմեղաւորսէր խորհուրդ և զգործ և 'ի նորին մաքառնաւորութենէ անտի գայլաբարոյ և հեզք և գառնամիտք այս է զգօնամիտք 'ի մի առբոտ մարմնոյ և ապրանեն Քրիստոսի Ճարտարկին։

Զազգաւ որոյ ըստ սիրապէս տեսութեանն, 'ի նոյն ինքն 'ի նա յայտնաբանի նախատաճառութիւնս՝ թէ. «Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայոյ։ Բանզի կոյսն յարմատոյ անուտի Դաւթի էր և յԱբրահամէ՝ յոմէ և Բանն մարմին էառ իսկապէս, զոր բղխեալ ասէ, յայտ ապարեալ զառանց ամուսնութեան ծընունդն։ Ո՛չ ասէ 'ի սերմանէ կամ յերկրէ, այլ յարմատոյն գաւազանն բղխեսցէ. զի ոչ թէ յարմատան անցանիցէ. այլ զի 'ի բնութենէ կուսին առնուցցու մարմին. ոչ յերկնից ինչ բերեալ մարմին, և ոչ այլ ինչ 'ի նոր ապարատոց, և ոչ զինքն 'ի մարմին շրջեալ. այլ մարմին ճշմարիտ առեալ 'ի կուսէն հանդերձ մտաք և շնչով յիւր մարմին բանին Աստուծոյ, և ոչ մարդոյ ուրուք մարմին ապատարոյ քան զինքն՝ որպէս Պօղոս ասէ, թէ. «Եկն և եղեւ 'ի կնոջէ»։ Եւ թէ յարմատոյ անտի 'ի նախնեացն էր նա ըստ մարմնոյ՝ ընդ այն մի փոքրագոյն ինչ խորհեսցիս։

Բանզի նոյն ինքն նա և արմատ էր Յեսսեայ և սմերայն սերելոցն Աստուծոյ, որպէս նոյն ինքն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ասէր 'ի Յայանութեանն Յովհաննու։ «Եւ Յիսուս Գրիգորոս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ։ Ես եմ արմատ և սերունդ 'ի Դաւթէ և յԱդամայ և Աստղ առաւօտին և հոգին և փեսայն որ գալոց եմ»։ Եւ սոյն մարգարէ զսա ինքն կոչէ արմատ. «Պատմեցարք ասէ, ընդմանէ իբրև զմանուկ։ իբրև զարմատ 'ի ծարաւոտ երկրի»։ Արդ նա՝ որ ոչ միայն արմատ, այլ և Արարիչ էր, յարմատոյ անտի Յեսսեայ բղխեաց գաւազան յետոյ մարմնով ծնեալ 'ի կուսէն անախտաբար։ Եւ բարուք զՅեսսէ բերէ 'ի մէջ զանազանն և ոչ նշանաւորն զԴաւիթ։ Նա և Աւետարանիչքն նոյնպէս առնեն, զի ցուցցեն թէ ոչ ռամիկք գարշեցան Տէրն հասարակաց։ Եւ զմարմին բան գաւազան կոչէ զթագաւորութիւնն և զհովուական առաջնորդութիւնն յայտ առնելով։ Զի գաւազան 'ի ձեռս ունին թագաւորք եւ հովիւք։ ըստ այսմ և այլ մարգարէքն խօսին զնոյն խորհուրդ մարդեղութեան բանին։ ըստ որում Դաւիթ. «Գաւազան զօրութեան առաքեսցէ, ասէ։ քեզ Տէր 'ի Սիոնէ»։ Եւ թէ՝ «Ցուպ քո և գաւազան նոքա մխիթարեսցեն զիս»։

Եւ ինքն Բանն գնելով զանձն իւր 'ի չարչարանս խաչին, ասէր 'ի ձեռն Զաքարիայ՝ թէ. «Եւ առից զգաւազանն իմ զգեղեցիկ ցըրթել զուխտս իմ 'ի մէջ Ցուդայ և Իսրայելի»։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 10:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զի յաւղղեաց մեզ գաստատանս և իրաւունս
ընդ թշնամին կենաց և փրկութեան մերոյ ։
Հաստատեցանելով նոցին ներզութիւն և մեզ ըզ-
հանդիսեան անվախճան ։ Իբրեւ զթագաւորս
որոց յաթոռն յաւիտեանս յաւիտենից գա-
ւազան ուղղութեան գոլով ։ գաւազան թա-
գաւորութեան նորա ։ Եւ հովուեաց մեզ ա-
ռաքելով 'ի վայրս փոփոխութեան և 'ի ջուր
հանգստեան և 'ի ցուպ յարուցիչ բնութեանս
Եւ այսոքիկ անուանք ըստ մարմնոյն միաւո-
րութեան ասին 'ի վերայ նորա ։ և մարմնոյն
ասելով ոչ թէ բաժանեմք զԲանն 'ի մարմ-
նոյն։ այլ զատանեմս տեսմբ զպարժանն իմանալ
զանգի և ինքն իսկ զՀայրականն իւր ծնուանդ
յայտնաբանէ ։ և ընդ նմին զառ 'ի կուսականն
իւր ծնանիցն ասէ ։ Ա. յսպէս բարբառելով 'ի
բերանոյն Դաւթի ։ Տէր իմ։ Հայր իմ ասաց
ցիս Որդի իմ ես դու ծնեալ։ յորմէ բնութենէ
և յէութենէ անժամանակ և անախտաբար ։
անմայր 'ի յերկինս անսկզբնաբար ։ և ես
յայսօր ժամանակի վասն փրկութեան մարդ-
կան ծնայ զքեզ 'ի կոյս մօրէ՝ անհայր 'ի
յերկրի ։ Եւ այլուր թէ ։ "Յառաջ քան զա-
ստուածակ ծնայ զքեզ"։ Եւ թէ ։ "Դու ես
քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքի-
սեդեկի"։ Եւ զայսպիսի սքանչելեաց ծնուանդ
նորին լսելով 'ի կուսէ և անախտաբար իբրև
յարմատոյ ես ծնեալն Աստուած ես ծնողն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միշտ կոյս, մի՛ ակարագոյնս ինչ մտածեսցես, անհնազանդին զնայն կարծելով. զի վասն այնորիկ այս ահաւոր խորհուրդ յառաջագոյն օրինակօք յայտնեցաւ, զի 'ի կատարումն եկեալ քեզ քարոզ գիւրընկալ առ 'ի հաւատ եղիցին. և մի՛ 'ի բնութեանս քան հայելով, անկարելի զերան վարկանիցիս. յաղագս որոյ ազարտախս զմտաս ածել, զի Արարիչն բնութեան է, որ զայս ներգործեաց՝ որոմ և ամենայն բնութեան գործք 'ի ներքոյ անկեալ անասնոնորին հրամանի. որպէս հուրն՝ ցօղ առերեալ Մանկունքն, և ջուրն՝ արիւն առ Եգիպտացիսն և հրով վատեալ մորենին անկէզ առ Մովսիսիս. Եւ նշան գեղմանն առ Գեդեոն, և վէմն ազբերացեալ առ Իսրայէլացիս, և Յորդանան 'ի վերբ դարձեալ. և ծովն բաժանեալ, եւ գաւազանն գալարացեալ, եւ Սառայ և այլ եւս ամենայն ծնեալք։ Եւ Յորդանանս ետ հնչեմն արբեալ, և ծանրութիւն ոտապարին թեթեւութեամբ փայտին 'ի ներքսանն Եղիսէիս վերաբերեալ, եւ ջուրք Երիքովի բժշկեալք. և 'ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ, և այլ եւս յոլովագոյնք 'ի նախնումն 'ի վերբ քան զբնութիւն հրաշագործեալ՝ զմերս տիրկութեան խորհուրդ լուսաւորագոյնս նշանակեալ։ Վասն որոյ առանձին յայլոցն ասեացուք զԵսայիս թէ զի՞նչ ապդեօք կոչիցէ զմարմնաւորականն գալուստս

Եւ ելցէ, ասէ, ծաղիկ յարմատոյ անտի. և այս-
սու զաճուռնն յայտ առնէ. զի ելցեն և վերաս-
ցին զառ սակաւ սակաւ աճուռնն յայտ առնէ.
և ոչ ասէ թէ յայլմէ, այլ ինքն յինքենէ ա-
ճեսցէ գաւազանն։

Իբրու թէ ոչ երբէք թարշամեսցի ծաղիկ
գաւազանին։ Եւ ծաղիկն զայլ գունակ կերպ-
պարանս նշանակէ զնորա քան զայլ մարմնոցն.
ըստ այնմ թէ. «Գեղեցիկ է նա տեսլեամբ քան
զամենայն որդիս մարդկան»։ Թէպէտ և ըստ
Աստուածութեանն անտես և անհաս գոյ, և
ըստ մարմնոյ աղդեցութեանն անշուք և ան-
փառ յերկրի շրջելոյն, ուր տեղի ոչ ունէր ի-
ջեւանի, և ոչ փառք եւ փարթամութիւն
անոտի։ Միանգամայն և՝ի չարչարանս խաչին
խոնարհեալ անգեղ և անարգ ընմանէ, ասէր,
զոյն Եսայիայ. «Տեսաք մեք զնա և ոչ գոյր
նորա տեսիլ և ո՛չ գեղեցկութիւն»։

Դարձեալ ծաղիկ զնորին մնատեսութիւնն
վերագոչելով տեսանելի օրինակաւ զբարձրա-
գոյնսն տայ մեզ իմանալ։ Զի ըստ որում ծա-
ղիկք սկզբունք և նախաշաւիղք են պտղոցն
երևումն եւ կատարելութեան, այսպէս եւ
փրկականն Քրիստոսի յայտնութիւնն նախ
ծաղկեցաւ անախտաբար՝ի կուսական արգ-
անդէ, և ապա յետ կենդանարար իւրոյ մը-
կրտութեանն պտղաբերեաց՝ի մեզ զնշանսն
և զվարդապետութիւն՝ի փրկութիւն հոգ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուց մերոց և մարմնոց. և այս սկիզբն պրտ-
ղոյն։

Իսկ յորժամ բարձրացաւ 'ի փայտ խաչին
ողկոյզն օրհնութեան, յայնժամ ծաղկեցոյց
յանգամն իւր 'ի մեզ զպտղոգեաս Հոգւոյն.
զի մինչեւ ցայն վայր չեւ եւս էր տուեալ
զՀոգին. քանզի Յիսուս չթա էր փառաւո-
րեալ խաչիւն, պտղաբերեալ 'ի գերեզման-
նէն, զոր յետ յարութեանն ասէր. "Տը-
ւաւ ինձ ամենայն իշխանութիւն երկինս և
երկրի», և թէ. "Յանուն Յիսուսի Քրիստո-
սի ամենայն ծունր կրկնեսցի», և այլն։ Ա-
սպէս և մեք անդամք գոլով նմա, ըստ գլխոյն
մերոյ պատշաճի և յարմարութեան, իմանամք
զմեզ մերձ եղեալ առ նա որչափ եմք 'ի կեն-
ցաղս յայս. ոչ իբրու թէ արդէն առեալ
եմք զխոստացեալն մեզ բարութիւն և կամ թէ
հասեալ իցեմք 'ի նոյն այժմ արդեամբք. այլ
յուսով և հաւատով զՀոգւոյն շնորհ եւ
զորդեգրութեանն պայման առհաւատչեայ ըն-
կալեալ. ծաղկեալք աստանօր բարեպաշտու-
թեան հաւատով եւ արդարութեան գոր-
ծով. ընդ նմին ընդ գլխոյն մեր յարուցեալքս՝
ընդ նմին և նստցաւք երկնաւոր փառան ան-
դանօր շահելով զծաղկիս այսորիկ զպտղա-
բերութիւն։ Զի զոր գլուխն մեր յետ իւ-
րոյ յարութեանն, զնոյն և մեք յետ մերն յա-
րութեան ժառանգիցիմք զպատիւ և զփառս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անվախճանս։ Զի յաղագս այսորիկ նա մեզ՝ առաջին պատուղ կոչեցաւ. քանզի որպէս յաղկոյղ՝ պտուղ իմն խայծեալ հաւատոյթիւն է և այլոցն 'ի նոյն նմանութիւն հաստատել, այսպէս և ընդ գլխոյն մեր յարութեան եւ մեք ընդ նմին յարուցեալ և 'ի փառս նոյնաբարձրացեալ՝ եւ յանձառ կեանս վերացուրեալ լինիմք։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ։

Ամաչեսցեն հերետիկոսքն, որ աստիճանս իմն մուծանեն 'ի զուգահաւասար Սուրբ Երրորդութիւնն՝ զՈրդի փոքր ասելով քան զՀայր և զՀոգի նուազ քան զՈրդի։ Ա՛ռ որս ասելի է թէ գրեսցուք զՈրդի փոքր քան զՀայր որպէս գուք հայհոյէք. Հոգւոյն զի՞նչ կարօտ էր բանն՝ զորմէ դուք ասէք նուաստ գոլ զնա. զի ամենայն նուազ 'ի լաւէ անտի օրհնեսցի։

Այլ վասն մեր յիւր շնչական և 'ի նիւթական մարմինն ընդունի բանն Հօր՝ զՀոգին, զհանճար և զաստուածպաշտութիւն, զի ինքեամբ մեզ ցուցցէ օրինակ. թէ մեք եմք կարօտ այնպիսի պարգևաց Հոգւոյն Աստուծոյ, և ոչ նա՝ որ Տէրն է, կարօտ ինչ է Հոգի ընդունելով. այլ 'ի նմա երևելով Հոգւոյն մեզ լինիցին հաւատարիմ նորա երախտիքն։ Զի որպէս մարդն լինելով ոչ եթէ կարօտ ինչ էր և ապա այնորիկ եղեալ մարդ.

Generated on 2017-11-07 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

այլ զի մարդն լինելով արասցէ զմարդիկ որդի Աստուծոյ։ Նոյնպէս և յընդունել զՀոգին, ոչ եթէ իբրև զկարօտս ոք ընկալաւ. այլ զի կարօտելոց ինքեամբ բաշխեսցէ զՀոգին Սուրբ։ Զի թէ ամենայն ինչ Հօր նորա է. որպէս ինքն ասաց. յայտ է թէ Հոգին Հօր նորա բնութեանակից և էակից է. քանզի և իւր իսկ է Հոգին, որպէս և ասէ թէ, «Զիմէ առնուցու և պատմեսցէ ձեզ. և թէ, Ելթամ և առաքեմ զնա»։ Եւ Պօղոս թէ. «Որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա»։ և դարձեալ թէ. «Առաքեաց զՀոգի Որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր»։ Եւ Պետրոս ասէ թէ. «Մարգարէքն խօսէին, յոգւոյն և յոգւոյն ժամանակի ազգեր 'ի նոսա Հոգին Քրիստոսի»։ Վասն որոյ և Յովհաննէս ասաց թէ. «Ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին»։ զի ոչ տայ և ոչ չափէ, քանզի 'ի նմին իսկ է. վասն որոյ որպէս զանձն իւր եդ 'ի վերայ խաչանցըս. նոյնպէս և զՀոգին իւր բնակից եառ 'ի կենդանութիւն մեռելութեան աշխարհի՝ կամաւք Հօր և նորին իսկ Հոգւոյն Սրբոյ։ Բայց միտ դիր ասացելոցս՝ զոր ասէ թէ. «Հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ», զոնութիւնութեամբ հաճոյ լինելն Հօր յայտ առնէ, որպէս և ասացն իսկ թէ. «Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ»։ Քանզի բանն մարդելեալ գերբնաւորէս. և 'ի բնաւորականն մարդ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կութեան երեւեալ գտաւ հանգիստ Հոգւոյն Սրբոյ։

Եւ այս ևս յաղագս մեզ օրինադրութեան, որք պարտին այնպէս գնալ որպէս նայն գըՆաց. և Քրիստոսի գլխոյն մերոյ անդամք յօդեալ և պատշաճեալ քրիստոսականքս պարտիմք 'ի խաչ հանել զմարմին կարեօք և ցանկութեամբ աշխարհի, և այնպէս արժանաւոր հանգիստ գտանել Հոգւոյն Սրբոյ։

Զի որպէս մարմին լինելումն ոչ մնաց Հոգին 'ի Նոսին, այսպէս ընդ Հոգւոյն միաբանելոց և նոքաւ կնքելոյն յաւէտ պարգեւեսցի հանգչիլ եւ մշտնջենաւորել Հոգին առ Նոսին 'ի գլխոյն մերմէ 'ի մեզ հեղեալ և մնացեալ։ Եւ ասելովն թէ, "Ի վերայ նորա ցուցանէ թէ 'ի վերուստ է Հոգին։ Հոգի իմաստութեան և հանճարոյ Հոգի խորհրդոյ և զօրութեան։ Եւ զի՞նչ պէտք էին իմաստութեան այնմ, որ Հօր գոլով իմաստութիւն, և իմաստութեամբն այնու հիմունս արկեալ եղեւ երկրի, եւ իմաստութեանն այնմ ոչ գոյ բաւ, եթէ ոչ զմարմնական տնօրէնութենէն յայտ առնէ, ըստ այնմ թէ. "Ցիսուս ամէր իմաստութեամբ և շնորհօք։ Ընդ որ ժպիրհ Հրէայքն աքանչացեալ ասէին. "Սմա ուստի է այս իմաստութիւն, զի ուսեալ բըՆաւ չիք, եւ զԳիրս գիտէ։ Այնպէս եւ հանճար և խորհուրդ առնուլ նմա, որ իւր էր

խորհուրդ և հանճար, որպէս ասէ Սողոմոնիւ և ընդ Հօր միշտ ունէր զայս բնաւորապէս։ Այլ մարդկաբար է իմանալ, որ յաւիտենական հարցուածս դաւանանութեան և 'ի քննութիւնս կեղծաւորելոցն՝ գերազոյն հանճարով զՀրէիցն զդպիրսն ըմբերանէր և զառակաւոր եւ զհանճարեղագոյն վարդապետութիւնն բարբառէր։ Իսկ, "Հոգի զօրութեանդ, զի դարձաւ Յիսուս, ասէ, Հոգւով զօրութեամբ Հոգւոյն 'ի Գալիլեայ եւ առնէր զնշանսն և զսքանչելիսն։ "Հոգի կիրութեան եւ աստուածպաշտութեան լցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ"։ Ըստ մարմնաւորութեան Տեառն մերոյ իմն և զայս, որպէս ասէր Դաւիթ՝ թէ. "Էօծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեամբ առաւել քան զընկերս քո"։ այս է քան զամենայն դասս օծելոցն, քանզի նոքա ծառայք գոլով՝ մասին իմն Հոգւոյն ընդունակք եղեն։ Որ՝ մն իմաստութեան, որպէս Բեսելէլ, և Սողոմոն։ Որ՝ մն հանճարոյ, որպէս Յովսէփ և Դանիէլ։ Որ՝ մն զօրութեան, որպէս Սամփսոն և Գեդէոն և այլք։ Որմանք խորհրդոյ և գիտութեան, որպէս ամենայն մարգարէքն։ Եւ որմանք աստուածպաշտութեան, որպէս Դաւիթ և Եզեկիաս և Յովսիաս։ Իսկ նա, որ Աստուած մարդացեալն, ըստ առնօրէնութեան ըզքսութիւն Հոգւոյն յինքն վասն մեր ընկալաւ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վասն որոյ ասէ մարգարէն թէ. «Լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ»։

Զի որպէս չէ ոք բաւական Հօր, բայց միայն անձն Որդւոյ, և ոչ Որդւոյն՝ թէ ոչ ծոցն Հօր, նոյնպէս և ոչ Հոգւոյն Արբոյ, եթէ ոչ Որդի, որ էակիցն միայն իսկ է։ Եւ արդ եթէ իւր իսկ է Հոգին, ընդէ՞ր ընուցու նովաւ. եթէ ոչ վասն մեր, զի որ եցոյցն զՀոգին յանձին հանգերձ ամենայն պարգեւօքն, յայն սակս եցոյց, զի յերկիրն Աստուածպաշտութեան մերձեցուսցէ զմեզ։ Զի զանձնէ ոչ երբէք ասաց թէ ես երկեայ 'ի քէն. այլ թէ ես սիրեցի զքեզ. քանզի Որդւոյ սէր վայելէ և ոչ երկիւղ։

Իսկ եթէ ժպրհիցի Հրէայն 'ի մարդս յոմանս լուծանել զգրեալս՝ ցուցցէ թէ ո՞վ ոք 'ի մարդկանէ բաւական եղեւ ամենեւիմբ զամենայն Հոգին ընդունել։ Զի թէպէտ և կատարեսցին գործս ինչ առաւել քան զայլ մարդիկ, որպէս Դաւիթ եւ Եղեկիայ՝ որ ապրեցոյց աղօթիւք զքաղաքն Երուսաղէմ, և Զօրաբաբէլ. սակայն փոքր ինչ և միայն յիրս ինչ և Աստուծոյ օգնականութեամբ եւ զօրութեամբ։ Եւ այն, որ զաղցանէ կարծէ զասայելս զՔրիստոսէ, ընդէ՞ր ոչ յանձն առնու ցու զնախաձառութիւնս, որ թէ զի՞նչ ինչ զօրութիւնս կատարեաց, ասյն իսկ մարգարէ յայտ առնէ ասելով. «Իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց»։ Եւ ոչ այաշափ միայն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այլ և յաջորդս առաջի եգեալ ընթերցուածոյս ցուցանէ զասացելոցս զօրութիւն եւ յանդիմանէ զանամօթան. քանզի ասէ թէ՝ ոչ 'ի կարծըս գատեսցի. զի Աստուած է, և ծածկեալքն մեր յայտնի են նմա, և ոչ ըստ խօսից յանգիմանեսցէ, զի այսպիսի իրք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. ըստ այնմ թէ. "Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերոյ յայտնի են". և թէ. "Մարդ յերեսս, իսկ Աստուած 'ի սիրտս հայի". յորմէ մեք բաղուամ անգամ վրիպիմք. և զանաչառն եւս յայտնէ գատաստան, որ ոչ ըստ բանից յանգիմանէ. այլ և զծածուկս 'ի մէջ բերէ, զի գատաւորք աշխարհի յայտնիս քննեն և յորովայն վրիպելին յիրաւացուցն։ Իսկ Աստուած և զծածուկսն քննէ. ըստ այնմ թէ. "Զանգուածս իմ տեսին աչք քո", և թէ. "Ոչ քննէ զգաղտնիս արտից մերոց", և թէ. "Կենդանի է բանն Աստուծոյ և ազդող". զի անցանիցէ մինչև 'ի բաժանումն շնչոյ և հոգւոյ և քննիչ է մտաց, զի ոչ միայն զշունչն 'ի մարմնոյն մեկնէ, այլ և ըզշնորհս Հոգւոյն 'ի շնչոյն. վասն որոյ ոչ գլուրոց կամ բանի կարօտի, այլ արագագէ իրաւունս տնանկին եւ յանդիմանեսցէ զխոնարհս երկրի յաւուր մեծի Յայտնութեան իւրոյ։ Ահաւասիկ ոչքա աստուածութեանն են իսկ նշանակ։

Յաղագս հրաշափառ խորհրդոյ բարեբանեալ առուրս լուսոյ և նորոգութեան աստ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուածային յայտնութեանս յոլովք են աստ-
ուածաբանիցն բանք և Սրբոց Հարցն 'ի նա-
սին աշխատասիրաբար տեսութիւնք։ Ուստի
և մեզ առնաբանական սպասաւորութիւն
հասեալ, բազում էին բանք և գժուարապա-
տումք, այլ այսոքիկ բաւական լիցին, զի ս՚յա-
ճախագոյնն այլոց թողով տեղւոյ և ժամա-
նակի, մանաւանդ բարձրագունիցն յիմաստա
քան զմեզ և երիցագունիցն անձանց, և մեք
խօսեցուք յաղագս այլ ինն խորհրդածու-
թեան, յոր ժամանեալ բարեպաշտաբար մի-
ահամուռ ժողովեցաք այսօր։

Զի յաւուրս Յայտնութեան անմահ և երկ-
նաւոր թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստո-
սի ելհաս մերս Սուրբ Ժողովս և աստուածա-
յինս լուութեան գումարիլ աստանօր յեկեղե-
ցւոջ և զառ 'ի քաջ և. 'ի բարեպաշտ արմատոյ
բղխեալ դաւապանն և զբոյս բարեպաշտու-
թեան զպսակաւորս Լեւոն օծանել և ընծայել
'ի թագաւորութիւն Տանս Թորգոմայ Ազգիս
Հայաստանեայց։

Բեր ուրեմն փոքր ինչ յաղագս թագաւորու-
թեան խօսեցուք յԱստուածաշունչ Գրոց։
Նախ առաջին քննելով թէ զի՞նչ է թագաւո-
րութիւն. և ապա թէ ո՞վ է առաջին թագաւոր։
Երկրորդ թէ յորմէ՞ հետէ, և կամ զի՞նչդ ըս-
կըսաւ թագաւորութիւն 'ի մարդիկ։ Եւ շար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղորդ թէ զինչ են կարգ եւ իրաւունք թագաւորի ։

Թագաւորութիւնն է ըստ ուղիղ բանին՝ ի վերայ աշխարհի՝ որ իւր է վիճակեալ և՝ ի նըմա բնակելոցն իշխել, արդարացի հարկս և իրաւունս՝ ի նոցանէ առնուլ և զնոսին՝ ի հաստատութեան պահել ։ Արտաքին թշնամեացըն քաջութեամբ պատերազմաւ յաղթել, եւ կամ հաշտութեան հնարիւք զխաղաղութիւն ողջունել ։ Եւ զամենայն ինքեան հնազանդեալն առանց իւրիք պատճառի յօրէնս եւ յիրաւունս ամլուծանելի ունել. բարեգործացն գովութիւնս և պատիւս շնորհել, և չարեացն և ոչք արտաքոյ օրինացն արշաւիցին՝ տանջանս և պատիժս հաստուցանել ։ Ոչ երեւելի փառաւք բարձրամտեալ, այլ սպասաւոր Աստուծոյ թագաւորութեանն զինքն նկատել՝ ըստ Սղոմոնի թէ. «Լուարուք, թագաւորք. զի սպասաւոր էք Աստուծոյ թագաւորութեանն». և գլխաւորելով ասասցուք. թագաւորութիւն է, որ իշխէ զբաղումն եւ զբաժանեալն ըստ անձանց և ըստ աբաւեստից, նաև ըստ բարուց, և թէ դէպ լինցի ըստ կրօնից, բարեպաշտութեամբ և իմաստութեամբ՝ ի խաղաղութիւն և՝ ի բարեկարգութիւն նաւանձել ։ Եւ այս է սահման թագաւորի ։

Յետ այսորիկ խնդրելի է թէ՝ ո՞վ է առա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ջին թագաւոր։ Արդ վերագոյն այս սահման-
նի, և եւս և քան զոր կարեմք իմանալ և ճա-
ռել. ո՞ այլ ոք առաջին թագաւոր, բայց ե-
թէ երանելեանն և փառաւորեալ Սուրբ Եր-
րորդութիւնն երկրպագեալ՝ի մի Աստուածու-
թեան և Տէրութեան, ըստ մարգարէին թէ.
«Թագաւոր մեծ՝ի վերայ ամենայն երկրի Աս-
տուած էր». որ առ՝ի յինքեան բարերարութե-
նէ արարչագործելոցն իշխէ առհասարակ վեր-
նոցն և ներքնոցն։ Եւ զամենեսեան շարժելով
միանգամայն և պարզ զօրութեամբն իւրով
յիւրաքանչիւր բնութիւն և՝ի մի միաւորու-
թիւն զնոսին պահեալ՝ այնոքէ և դարձուցանէ
՝ի ժողովարանն իւր Նախախնամութեան և
յԱստուածարարն պարզութիւն։ Նախ զբաս-
զումն և զգանազանն՝ ըստ փառաց և ըստ
պատուոյ զանմարմինն, որք են պարզք և ան-
շարադիրք բնութեամբ. և ապա ազգս ամե-
նայն առաջնապէս, զորս՝ի սմա ներբագոյնք
են՝ որպէս լուսաւորացդ կարգ՝ զանազանու-
թեամբ, պայծառութեամբ և ընթացից. և ա-
պա զորս՝ի հակառակ պատճառաց՝ի մի մի-
ութիւն եզեն գոյացեալ, որպէս զմարդ՝ի հո-
գւոյ գոլով և՝ի մարմնոյ, երկնային և երկ-
րաւոր, մահկանացու և անմահ։ Ընդ որոց և
զամենայն արիւնաւոր կենդանիս զոր՝ի բազ-
մաց շարադրեալ, և նա և զամենայն ազգի
ազգի անշնչից տեսակս։ այլ եւ զամենեցուն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զգալեացս զարմանս և զակիզքն՝ զտարերս ։ ո-
րոց սիրելութիւն և հակառակութիւն ստար-
չական հրամանաւ նորին զամենայն նիւթական-
նըս յիւրում էութեանն անլուծանելի ունի ։
Եւ այսպէս ամենակալ թագաւորութեամբն իւ-
րով զամենեսեան կալեալ և այնքեալ ունի յան-
քակտելի միութիւն և՝ի խաղաղութիւն. և ա-
մենակարող զօրութեամբն իւրով ամենեցուն
ըստ իւրաքանչիւր տեսակի կառավարէ և տի-
րէ ։ յորս և ինայէ և նախախնամէ ։ ըստ Սո-
զոմոնի թէ ։ “Տիրելդ քո ամենեցուն ։ խնա-
յել տայ քեզ զամենեսեան ”։

Ուստի և յանբաւ բարերարութենէն իւրոյ
և զայս եւս պատիւ շնորհեաց ստարածոց իւ-
րոց, որպէս՝ի հրեշտէնացն գասս կարգեաց յիշխա-
նարար պետութենէն իւրմէ Իշխանութիւնս
և Տէրութիւնս, Զօրութիւնս և Պետութիւնս
առ՝ի նախախնամել զնուաստագոյնսն ։ և հա-
զորդեցուցանել գերագոյն լուսափայլութեան-
ցըն ։ քանզի են՝ի նոսա արդարեւ խոնարհա-
գոյնք և վեհագոյնք և նոցին պաշտօնեայք ։
Եւ այլք, որպէս ասիցէ ոք, անդրանիկք յանմար-
մին էութեանցն և առ դուրս գերագոյ Սուրբ
Երրորդութեանն կեցեալք ։ Զորս ոչ միայն
յանուանց նոցին է իմանալ ։ այլ և՝ի գործա-
ւորութեանցն, յորժամ՝ի ձև մարմնոյ երեւեալ
աստուածաբանիցն խորհրդազգածս առնէին
զնոսա աստուածայնոցն ։ որպէս վեց սպրդն. ե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լեւեալ առ Եղեկիէլիւ ընդ իշխանութեամբ կացեալ՝ երեւեցան առն, որ զգեցեալէր զլոյծ նաւորն և ունէր զկամարն ընդ մէջ առ ձայն հրամանին Աստուծոյ, բացայայտեալ լինէր։ «Ա՛նց, ասէ, դու ընդ մէջ քաղաքիդ Երուսաղէմի և գիր նշան 'ի ճակատս զողջացելոցն» և ցայլսն ասաց. «Գնացէք զհետ նորա և կոտորեցէք» ոչ զոյս գութ կամիջիք, այլ զորս նա թողուցու 'ի նշանագրելոց։ Եւ դարձեալ «Որ զգեցեալ էր զքաղէնն փառաց և կայր 'ի վերայ գետոյն», զանազան տեսիլս կերպացուցանելով Դանիէլի մարգարէի, սակայն զթարգմանութիւն տեսլեանն ոչ ինքն յայտնաբանէր, այլ իսնարհագունից քան զվինքն հրամայէր զայս առնել։ «Գաբրիէլ, իմացո՛, զտեսիլդ Դանիէլի»։ Եւ առ Զաքարիայիւ յերեւելն ունէր 'ի ձեռին զձողաչափն և զլար շինուածոյն 'ի վերհագունիցն գոլով հրեշտակական դասուց և հրամանաւ՝ Զաքարիայի պատասխանէր. «Երթամ չափել զԵրուսաղէմ». և ոչ եւս զկատարելագոյնն հատոյց մարգարէին զպատասխանին վաղագոյն համարիլ զնա յիւրում խօսակցութեան, մինչև այլ հրեշտակ եկն ընդառաջ նորա ի բերան զպատասուոր իւր. առ որ հրամայեաց. «Ընթա՛ց, ասէ, և խօսեաց ընդ երիտասարդին ընդ այնմիկ, թէ ապողովից բնակեսցէ Երուսաղէմ 'ի բազմութենէ մարդկան և անասնոց»։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ յԵզեկիէլ թէ. «Զգեաց քերովբ մի ըզ-
ձեռն իւր և էառ հուր և եռ 'ի ձեռն այլոյ և
նա ցանեաց 'ի վերայ քաղաքին», Եւ 'ի Դանիէլն.
«Եւ հրաման յառաջնոյ իշխանէն», և այսոքիկ
զիշխանաց եւ զիշխեցելոց նշանակեն. Բայց
տես զգուշութիւն Գրոց. զի ոչ երբէք զնոսա
թագաւորս կոչէ. այլ իշխանս և զօրավարս
զօրաց Տեառն եւ պետութիւնս եւ զօրու-
թիւնս նուաճեալ ընդ հպօր թագաւորու-
թեամբ միայնոյ եւ առաջին թագաւորին.
Զկնի ասացելոցս բէր. ըստ խոստմանն մեր ու մ.
տեսցուք թէ յորմէ՞հետէ կամ զի՞՝ դ 'ի մար-
դիկ սկսաւ թագաւորութիւն.

Ի սկիզբն մարդկութեան շնորհեցաւ նմա այս
պատիւ. «Զի արար Աստուած զմարդն 'ի պատ-
կեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա և
օրհնեաց զնոսա և ասէ իշխեցէք ձկանց ծովու
և թռչնոց և անասնոց ամենայնի՝ որ 'ի վե-
րայ երկրի». և այսպէս թագաւորեցոյց զնա
երեւելի արարածոց ընդ թագաւորութեամբ
իւրով հնազանդիլ, զորմէ Դաւիթ ճառէ.
«Փառաւք և պատուով պսակեցեր զնա և զա-
մենայն ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից
նորա». Այլ քանզի նա 'ի պատուի էր և ոչ
իմացաւ՝ անհնազանդ եղեալ Արարչին իւրոյ.
ունկաւ ընդ հնազանդութեամբ, որոյ իշխէրն,
որ և պաշտեաց իսկ զպարարածս և ոչ զԱ-
ռարարիչն. և մարմին լինելով զրկեցաւ 'ի շնոր-

հաց Հոգւոյն՝ պաշտօնեայ եղեալ մեղացն՝ ծառայեաց նմին, ըստ Տեառն մերոյ հրամանին՝ թէ. «Որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց», որով և անկաւ մեղուցեալն ընդ մահու թագաւորութեամբ։

Եւ յառաջնակի ժամանակին թէպէտ ապրդ մարդկան իշխէին զգալեացս ամենայնի, սակայն ոչ որպէս 'ի սկզբանն պարգևեցաւ նոցին. այլ գաւեալք և դաւաճանեալք հնազանդելոցն, և 'ի վերս և 'ի վայր Տեառն խառնակեալք։ Վասն որոյ յորս մնաց կայծակն բարեպաշտութեան, թէպէտ և տիրեցին աղգաց, սչ երբէք թագաւորական անուամբ բարգաւաճեալք պանծային. այլ զանձինս 'ի շաբաթունէին որպէս Աբրահամ, և որ յառաջ քան զնա նահապետքն՝ Նոյ, Ենովք, Սէթ, Եւ Ենովս։ Իսկ այլք ամենք յաղագս կուրութեանն՝ որ էր 'ի նոսա՝ իշխեցին ասել զինքեանս թագաւոր յաղագս ամբառնալոյն 'ի վերայ համազգեացն. որպէս սկային ունէր բան. զի միաբանեալք յաշտարակաշինութեան անդ հակառակ անբաւաղօր կարողութեանն Աստուծոյ կանգնէին զամբարտաւանութեան ամբարտակն։ Իսկ յորժամ հզօր ձեռամբ բարձրելոյն Աստուծոյ կործանեցաւ բուրգն բարձրաբերձ 'ի քաղաքէ. այր զարամբ եկեալ հակառակէին տիրել. ըստ որում բառնացեալ Տիտանեանն Բեել, որ նա ինքն է Նեբ-

բոլոր, կանգնեաց իւր ձեռն և իշխեաց 'ի վերայ այլոցն, և որ թագաւորեալ ասացաւ, "Եւ եղև ակիզբն թագաւորութեան նորա Բաբելոն և Ուրէդ և Ակքադ և Քալանէ, որպէս ասէ Մովսէս մարգարէ, Ցերկրէ յայնմանէ եկ Ասուր և շինեաց զՆինուէ ո, յորմէ ցեղեալք թագաւորք Ասորեստանեայց, Նինոս և Նինուաս, որ և Զամէս, մինչ 'ի Թկլատփասարայ և 'ի Սաղմանասարայ, և 'ի Փուայ, և 'ի Սենեքերիմ, և 'ի ոցուանց . . . Քաղդէացիք. 'ի Շամասրոմզայ Բաղդան որդի Բաղդան. և անդ մինչ 'ի Նաբուգոդոնոսոր և 'ի Բաղդասար, յորմէ թագաւորութիւն նոցա բաժանեալ առաւաւ Մարայց և Պարսից։ Որոց սիրեաց առաջին Դարեհ որդի Արշուրայ 'ի զաւակէ Մարայց, և Եկբատան 'ի Պարսից՝ օծեալն, որք բռնակալեալք Հայկինն զարմի, որ յետ ապանանելոյն զԲել, սիրեաց Հիւսիսային կողմանն և ամենայն Արեւելից եւ ապա ապատեալ յաւուրսն Արշակայ 'ի տէրանց նուաճեցան ընդ իշխանութեամբ Պարսից մինչեւ զԴարեհ եւ Արտաշէս եւ Կամբիսոս, Քսերքսէս և զԴարեհ վերջին, զոր քակեաց Աղեքսանդր Մակեդոնացի։ Եւ 'ի յոլով կողմանս և 'ի տեղիս բռնակալք, սպիտակապէս կոչեցեալք թագաւորք յոլով և անթիւք, զորոց լուելի է զանուանսն, Իբրեւ զարանց յաւացելոց 'ի զօրութիւն բազկի իւրեանց, որք խլեցան

յարկացն Աստուծոյ և յերկիր կործանեցան ։ Բայց ազգն աստուածածանօթք՝ Աբրահամ իսահակ և մեծն Իսրայէլ՝ Նահապետք եղեալ իշխեցին ազգին իւրեանց բազմաց ։ Թագաւոր խոստովանելով իւրեանց զՀշմարիտ Թագաւորն Աստուած ։ որպէս յայտ առնէ զայս Մովսէս յաղագս աբանելն զԵդոմայեցին, ասէ. "Այս են Թագաւորք ։ որք Թագաւորեցին յԵդոմ ։ մինչդեռ ոչ էր Թագաւոր յԻսրայէլ։ և որք ժանտք և ապերասանք այնպէս աղաւաղեցին զայս մեծագոյն պատիւ ։ մինչ զի որ տիրէր մի քաղաքի և փոքրագոյն տեղւոյ՝ Թագաւոր զինքն կոչէր ։ որպէս հինգ Թագաւորքն հինգ քաղաքայն Սոդոմայ ։ որք մարտեան ընդ Գոդողգոմորեանսն ։ զորս վանեաց Աբրահամ։ և սրչափ Թագաւորք կարծեցան 'ի Մովսիսէ ։ որ տիրեաց վեց հարիւր հազար արանց 'ի քսան ամէնից 'ի վերս մինչև ցվաթսունամեանսն Թուեալ։ Թող զոր այլ ևս աւելիքն էին և. ոչ երբէք հպարտացաւ ։ կամ Թագաւորութեան շուք անձին ընդձայաւ ։ վասն որոյ 'ի Տեառնէ Աստուած կարգեցաւ Փարաւոնի ։ Այլ և առ Յեսու ։ որ նայն ժողովրդեանն խոնարհաբար առաջնորդէր ։ բազում գտցես և անթիւ անուանեալ Թագաւորք կոտորեալք 'ի նմանէ ։ որպէս Գիրն յայտնէ զԹագաւորն Երիքովի և զԹագաւորն Գայեայ որ և զԱդոնիբեզեկ Թագաւոր ընդառնեալ կոտորեաց զոտսն նորա և զձեռս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և նա ասաց. «Եհովանասուն թագաւորք ծայրակոտորք ոտիւք և ձեռօք ուտէին 'ի սեղանի իմում՝ որպէս արարի, եղև ինձ։ Իսկ ազգն և ժողովուրդն Աստուծոյ թէպէտ յամենայն տեսակս մեղաց խոտորէին, այլ յայսմիկ առաւել եւս զգուշանային Աստուծոյ միայնոյ շնորհելով զթագաւորութիւն եւ զիշխանութիւն, ինքեանք հովուելով ժողովրդեանն. որպէս Գեդէոն, յորժամ ասային ցնա որդիքն Իսրայելի թէ. «Իշխեա՛ դու մեզ և որդիք քո։ Նա պատասխանի ետու և ասէ. «Ոչ իշխեցից ձեզ ես և ոչ որդի իմ, այլ իշխեսցէ ձեզ Տէր Աստուած»։ Վասն որոյ ախորժելի էր այս Աստուծոյ և հաճելի էր ընդ սոյն. քանզի համարձակ էր մատածութիւնս այս սկզբնաւորական պատուոյ թագաւորութեան, զոր շնորհեաց մարդոյն ստիրել արարածոց և լինել 'ի ներքոյ թագաւորութեան Աստուծոյ եւ զնա միայն ճանաչել թագաւոր։

Արդ ուղիղ և բարեպաշտ ասհմանագրութիւնս այս 'ի ժողովուրդ Աստուծոյ՝ յԻսրայելէ եհատ մինչև 'ի Սամուէլ մարգարէ. և յայնժամ որպէս զամենայն շարիս ուսեալք 'ի հեթանոսաց՝ գործեցին այսպէս և յայսմիկ նախանձեալ մատեան առ Սամուէլ մարգարէ և ասեն. «Տուր մեզ թագաւոր, որպէս ունին ամենայն ազգք հեթանոսաց», և շար թուեցաւ յաչս Սամուէլի. վասն որոյ ասաց առ նա Աս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ասուած. «Ոչ եթէ զքեզ, այլ զիս անարգեցին զթագաւորել 'ի վերայ ինքեանց. արդ ասա՛ր նոցա թագաւոր. բայց ասա՛ նոցա զիրաւունս թագաւորի», և ժողովեալ զնոսա Սամուէլ ասաց. «Գիտասջիք. զի Տէր Աստուած երկանն զձեզ յԵգիպտոսէ. արար ձեզ զամենայն բարութիւնս, և դուք անարգեցիք զնա չինել թագաւոր 'ի վերայ ձեր. Եւ արդ լուարուք զիրաւունս թագաւորի. զուստերս ձեր առցէ և արարցէ իւր կառավարս և զհեծեալս և առաջնորդակս և զօրականս և մշակս, կթել զկուրթս իւր, հնձել զհունձս իւր. և զդստերս ձեր՝ յիւղեփեանս, հացարարս և խորտկարարս. զընտիր այգիս ձեր և զթզենիս առցէ և աղաղակեսջիք յերեսաց թագաւորին ձերոյ առ Տէր և ոչ լուիցէ ձեզ»։

Զայս ասէր Սամուէլ հրամանաւն Աստուծոյ, զի թերեւս զարհուրեալք արգելցին 'ի խնդրոյն. և նոքա ասեն. Զամենայն յանձին կալցուք, միայն ասա՛ր մեզ թագաւոր. և էօծ նա զՍաւուղ որդի Կիսեայ յազգէ Բենիամինի, որ թէպէտ խաղաց 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ և մարգարէանայր. ասկայն յառաջս նախասահմանեալ եղև թէ, «Եւ Սաւուղ 'ի մարգարէսն. որ յեռոյ վերացաւ 'ի նմանէ Հոգի Տեառն. և այս չար խեղդեր զնա և զանպատշաճ խնդիրն Իսրայելի յայտ արար Սամուէլ, զի ժողովեալ զամենայն Իսրայէլ եկաց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յաղօթս և 'ի ժամ հնձոց եւ Տէր ձայն ո-
ղոտման և կարկուտ . և աղաղակեալ որդւոցն
Իսրայելի , եկաց յաղօթս Սամուէլ և դադա-
րեցին արկածքն , և Սաւուղ գտաւ չար վա-
ղն որոյ ատեցեալ եղեւ 'ի Տեառնէ . զի թէ-
պէտ երարձ զվհուկս յԻսրայելէ, սակայն ին-
քըն հմայէր , որպէս ասէր առ նա Սամուէլ
թէ. "Հմայքն մեղք են եւ ցաւս եւ աշխա-
տութիւնս ածէ թերափոգ 'ի վերայս . այլ և յե-
տոյ զվհուկն հարցանէր , վասն որոյ մերժեալ
խոստեցաւ 'ի Տեառնէ չթագաւորել . և թէ-
պէտ քառասուն ամ թագաւորեաց 'ի վերայ
Իսրայելի որպէս յայտ առնէ Պօղոս 'ի Գործս
Առաքելոցն, սակայն զի չէր ըստ հաճոյից . այլ
յանօրէնութեան և 'ի բռնութեան կարգի հա-
մարելով Գիրն ասէ . "Ուրդ ի տարեւոր էր Սա-
ւուղ 'ի թագաւորելն իւրում և երկուս ամս
թագաւորեաց Իսրայելի ». այսինքն թէ զեր-
կուս ամս՝ որ իբրև զտարեւոր աղայ՝ անմեղ
էր 'ի չարեաց և անեղծ , այն էր թագաւո-
րութիւն ըստ Աստուծոյ . վասն որոյ որպէս
ծառք և մանաւանդ թզենի արտաքոյ սահման-
նաւոր ժամանակի նախկին ընձիւղեալ պը-
տուղքն սին և թափուր լինին, այսպէս և որ-
տաքոյ իրաւանցն՝ որ յԱստուծոյ եղեալ իրք ,
մինչեւ ինքն հաճեալ որբեւցէ զիրան , որ-
պէս ամուսնութեան Ադամայ՝ նախկին Կային
և թագաւոր խնդրելոյն Իսրայելի՝ Սաւուղ ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ար և մերժեցաւ 'ի Ցեսուէ. և ապա զարտուղ-
ղութիւն խնդիր նոցա արբեալ Աստուծոյ, ինքն
կամեցաւ տալ նոցա թագաւոր և եհատ զԴաւ-
իթ որդի Յեսսեայ՝ ըստ աստուածային կա-
մաց իւրոց թագաւոր. զի այլ է թագաւորն՝
որ յԱստուծոյ, և այլ՝ որ 'ի մարդկանէ, որպէս
ինքն ասէր առ Սամուէլ. "Երթ 'ի Բեթղեհէմ
առ Յեսսէ, զի տեսի ես յորդւոց նորա թագա-
ւորել ինձ 'ի թագաւոր», և թէ. "Գտի զԴաւիթ
որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմոյ, որ արաս-
ցէ զամենայն կամս իմ», եւ այսպէս Գիրն Ա-
ստուածային այլ անուամբ նշանակէ զթագա-
ւորն Աստուծոյ և այլով զաշխարհական՝ որ-
պէս Աբիմելէք արքայ Գերարացւոց եւ Փա-
րաւոն թագաւոր Եգիպտոսի 'ի տեղւոյն նը-
շանակեալ։ Իսկ զՄելքիսեդեկէ Պօղոս ասէ.
"Նախ թարգմանի թագաւոր արդարութեան,
ապա թագաւոր խաղաղութեան». և ոչ միայն
յաստուածայնոց Գրոց է ուսանել, այլև լսէ 'ի
մարդկանէ, որպէս որդիքն Քեթայ ասէին
ցԱբրահամ. "Լուր, թագաւոր ոմն եհ գու 'ի
միջի մերում». ուստի վասն այսորիկ զԴաւիթ
ըստ կամաց իւրոց գտեալ թագաւորեցոյց. զի ե-
զիցի նա հայր և օրինակ թագաւորաց բարեպաշ-
տութեամբ և ամենայն բարեգործութեամբ,
զի որք ըստ նորայն շաւղաց գնասցեն, ոչ են
'ի մարդկանէ թագաւորք. այլ յԱստուծոյ կար-
գեալք և 'ի ներքոյ ամենակալ թագաւորու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեամբ նորա նուաճեալք, որպէս եւ զայս գիրն յայտնէ. զի զորս վիզաստանէ 'ի թագաւորացն, ասէ. Գնաց 'ի ճանապարհս թագաւորի հօր իւրոյ. և զորս եպերէ՝ ասէ. Ո՛չ գնաց նա ընդ շաւիղս Դաւթի. այլ հղև զհետս խոտորելեաց Աստուծոյ, ասեն Յերոբոամու և Աքաբայ. և այնչափ հաճեալ ընդ Դաւիթ, մինչ զի փառաւորեաց զնա 'ի կենանըս և զկնի մահու. և յանուն նորա ղբարիս ունէր՝ որոց ախորժէր. որպէս ասէր առ բաղուամն և առ Եղէկիաս՝ թէ. "Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ վասն իմ եւ վասն Դաւթի ծառայի իմոյ. զի թէպէտ չարչարեցաւ նա 'ի թշնամեաց՝ յիւրոց եւ յարտաքնոց, սակայն ուղիղ հաւատովն՝ որ յաղթեաց ամենեցուն, և թէպէտ մեռաւ, ընկալաւ 'ի ձեռանէ Տեառն կրկին զհատուցումն։ Սակայն ոչ այնու բաւականացաւ, այլ և անձամբ զանձն պատուհասեաց. լայր 'ի մահիճան և պատատուօքն զանկողինն թանայր։ Արդ՝ զսա թագաւորեցուցեալ Աստուծոյ՝ ուստից այսպէս թագաւորել, որ է ըստ նորին կամացըն. և արտաքոյ եղեալն այսորիկ՝ ընդդէմ է հաճոյիցն, մարդկան չարութեան գիւտք, որպէս 'ի ինդրելն Իսրայելի թագաւոր. միշտ ասէր Աստուած զամբարշտութիւն նոցա, առամաշեցուցանել զնոսա որպէս Ովսէիւ ասէր. "Ո՞ւր է թագաւորն քո, զորմէ ասայիր. տուր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ինձ թագաւոր»։ Նա փրկեսցէ զքեզ և յամենայն քաղաքս քո իրաւ արասցէ քեզ։ և դարձեալ՝ «Եռու քեզ թագաւոր բարկութեամբ իմով և կարձեցի սրտմտութեամբ իմով»։ և դարձեալ։ Անձամբ թագաւորեցին և ոչ ինեւ տիրեցին։ և ոչ ցուցին ինձ իսկ ըստ ճանապարհին Դաւթի թագաւորեցելոյն, ինքեամբ ասէր թագաւորել։ Գիտելի է զի ոչ միայն զբարեպաշտան, այլ և զոմանս 'ի հեթանոսաց վասն կատարելոյ զկամն Աստուծոյ, և վասն յաղեցուցանելոյ բարկութեան զսրտմբտութիւն նորա 'ի մեղուցեալսն, և եւս վասն բարութիւնս ոմանց առնելոյ՝ ինքեամբ ասէր զթագաւորելն նոցա։ որպէս վասն Եփրոսի Պարսկի ասէր։ «Եւ յարուցից զնա արդարութեամբ թագաւոր»։ և զպատճառն յայտնէ։ «Նա շինեսցէ զքաղաքն իմ՝ սուրբ, և դարձուսցէ զգերութիւն ժողովրդեան իմոյ»։ զորմէ Եսայեայ գրէ։ «Այսպէս ասէ Տէր Աստուած ցօծեալն իւր ցԿիւրոս»։ և վասն տանջելոյ զԻսրայէլ և զայլս յաղագս մեղաց իւրեանց։ բաժակ ոսկի կոչէ զՆաբուգոդոնոսոր եւ ուռն ոսկի։ և թէ։ «Ազգ և թագաւորութիւն, որ ոչ ծառայեսցէ Նաբուգոդոնոսորայ։ ես Տէր 'ի վերայ ազգին այնորիկ։ և ածից զծառայն իմ՝ զՆաբուգոդոնոսոր 'ի վերայ Երուսաղէմի»։ Այլ զի ոչ ներելով ապար նա զանչնչանն 'ի վերայ Իսրայելի, ըս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատնեցաւ 'ի վերայ նորա Աստուած, "Եւ բարկացեալ էի Ժողովրդեան իմոյ, և զի դուռ չարարեր ողորմութիւն, ահաւասիկ յարուցանեմ 'ի վերայ ձեր զԱսորս". ընդ որս եկին և Պարսիկք ազատել զԻսրայէլ և բառնալ ըղձաւակն գաղդէացւոց, յորոց էր Պարսիկն Եփրոս օձեալն Աստուծոյ, զորմէ ասէր. "Եւ երթայց յառաջի նորա, զերինս հարթեցից և զգանձս աներեւոյթս ցուցից նմա".

Այլ և վասն այսր պատճառի փայտատ և և սղոց 'ի ձեռս իւր կոչէր զՍենեքերիմ, և զի հպարտացեալ հայհոյեաց զնա 'ի դուռն Երուսաղէմի, անդ կործանեցան զօրքն նորա, և ինքն յորդւոցն իւրոց սպանաւ առաջի կռոցն իւրոց։ Զորմէ իմանամք, զի թէպէտ և բարեպաշտքն նուաւաւ թագաւորեալք, այլ ոչ երթէ ամբարիշտքն ընդդէմ եւ հակառակ նմա իբր թէ ինքեանց զօրութեամբ յայն վիճակեալք և բառնակալեալք. այլ 'ի նորին թողտալոյ, վասն իրիք անօրէնութեան. և այնպէս առաջին թագաւորութիւն և նահապետութիւն որպէս յերկինս, այնպէս և յերկրի 'ի նմանէ է և անուանի, ըստ ձայնին Պօղոսի, այլ եւ Սողոմոնի՝ որ ասէ. "Լուարուք թագաւորք, զի 'ի Տեառնէ տուաւ ձեզ թագաւորութիւնդ և հզօրութիւնդ 'ի բարձրելոյն". և նոյն ինքն իմաստութիւնն Հօր Քրիստոս ասէ՝ յառակաւոր բանն Սողոմոնի՝ թէ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Ինեւ թագաւորք թագաւորեն, և բռունք ինեւ ունին զերկիր»։

Արդ այսոքիկ առ այն բաւական լիցին՝ թէ յորմէ՞ հետէ եւ զինչդ սկսաւ թագաւորութիւն 'ի մարդիկ։ Եւ մնայ մեզ պատմել այսուհետեւ զկարգ և զկենցաղավարութիւն և զգործ և զիրաւունս թագաւորի։

Զի որպէս ամենայն հասակի եւ կարգի պատշաճագոյն իրատ աննախանձ և առատաբար ընծայեն Գիրք Աստուածաշունչք, այսպէս և թագաւորաց, և եւս առաւել քան զայլոցն, ըստ նախագահութեան պատուոյն և աստիճանին մատուցանեն իրատս և սահմանս կենցաղավարութեան. քանզի գիտելով զի բարութիւն նոցա բազմաց, և չարութիւն նոցա յոլովից հասանէ։ Վասն որոյ պարտ եւ արժան է պատկիլ թագաւորի բարեպաշտութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ, իմաստութեամբ, զգաստութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ։ Եւ արդ բացայայտեացուք զգլխաւորաբար եղեալս։ Նախ լիցուք զհիմն ինչ պիտանի է թագաւորի բարեպաշտութիւն՝ որ առաւել թագապատճոյճ կազմէ զնա քան զականս պատուականս՝ շքեղապոյն քան զոսկերութիւն բազում աշխարհաց. ճշմարտագոյն հաւատով սիրել զԱստուած յամենայն սրտէ և 'ի զօրութենէ և 'ի նպին օգնականութիւն ելատահանալ և յա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մենազօր անուն նորա խրախոյս բառնալ. 'ի
բաղուկ նորա յուսալ և նովաւ զամենայն ինչ
վճարել. պանծալ որպէս օրինակն և նախնին
բարեպաշտ թագաւորաց Դաւիթ, զի զոր ինչ
առհաս ոչխարացն գործէր, զնոյն և 'ի թագա-
ւորութեան, զի ցուցցի առանց ծածկութեան
հաւատն. ըստ որում 'ի մանկութենէ յուսո-
վքն և հաւատովքն՝ որ առ Աստուած՝ յաղթէր
գազանաց և հակայից, այսպէս և 'ի թագա-
ւորութեանն ամենայն թշնամեաց իւրոց, որ
ոչ երբէք յուսացեալ եղեւ յայլ ոք, բայց մի-
այն 'ի Տէր Աստուած. ոչ 'ի կուռս որպէս
և պարծէրն համարձակ՝ թէ. "Մոռացեալ իցէ
մեր զանուն Աստուծոյ մերոյ կամ ձգեալ իցէ
զձեռս մեր յաստուածս օտարս։ Աստուած խնդ-
դրէ զայս, որ քննէ զգաղտնիս սրտից մերոց"։
Ոչ ապաւինեցաւ 'ի կուռս և յերիվարս, որպէս
ասաց. "Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և
ոչ սուր իմ կեցուցանէ զիս, այլ աչք քո և բա-
զուկ քո և լոյս երեսաց քոց". և թէ. "Սուտ
է ձի 'ի փրկութեան իւրում, 'ի բազում զօ-
րութեան իւրում ոչ ապրեցուցէ զհեծեալն։
Աչք Տեառն 'ի վերայ երկիւղածաց իւրոց,
Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա, և ոչ թէ
ընդ զօրութիւն ձիոյ կամեցաւ Տէր և ոչ ընդ
իրանս առն հակայի հաճեցաւ. այլ հաճեցաւ
յերկիւղածս իւր և յայնոսիկ, որք յուսան յո-
ղորմութիւն նորա"։ Այլ և ոչ 'ի մեծութիւն

7

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թագաւորութեան իւրոյ ապաստան եղև՝ որ ասէրն. «Զանգուխտ եմ ես և անցաւոր», և թէ. «Ես աղքատ և մնանկ եմ», և թէ «Տէր, հան 'ի բանտէ զանձն իմ», այլ մեծաւ յուսով և հաւատով Աստուած խրախուսեալ. նովաւ զամենայն զինչ առնէր, և զեղանակ սիրոյ նորա առ Աստուած 'ի նորին բանից անտի ծանիցես, այլ և 'ի գործոց, ըստ որում յայտնէր զԱստուած, զԱստուածն անձուկ սիրոյն. «Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ Աստուած», և թէ. «Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած, երբ եկիցի երեւեցայց երեսաց քոց», և այլ յոլովնման ասացին, պատկեր յոյժ և. նախ քան զամենայն ինչ զտուն Աստուծոյ և տեղի յարկի փառաց նորա, վասն որոյ և ասէր առ Նաթան. «Ես բնակեմ 'ի տան եղեւնափայտեայ և տապանակն Աստուծոյ արտաքոյ կացցէ». մինչեւ 'ի Տեառնէ արգելաւ ոչ շինել, սակայն խընդրեաց գտանել զյարկն Աստուծոյ Յակոբայ։ Նա և Սողոմոն շինեաց նմա տուն ըզհռչակաւորն և զերեւելին, սակայն Դաւիթ 'ի տան հանգոյց զնա և կարգեաց երգս և պաշտօնեայս։ Եւ յորժամ հալածեալն լինէր Յաբիսողոմայ որդւոյ իւրոյ, ոչ թողացոյց քահանայիցն զտապանակն Աստուծոյ ընդ նմա շրջեցուցանել, այլ ասաց. «Դարձուցէք զդա 'ի տեղի իւր, եթէ հաճեսցի ընդ իս Տէր, ցուցցէ զիւս

անգամ ինձ զդա և զվայելչութիւն դորա։ Այլ եւ Սողոմոն իբրեւ զժառանգութիւն ինչ զբարեպաշտութիւն փոխանորդեալ 'ի հօրէն 'ի սկիզբն թագաւորութեան իւրոյ։ ոչ զայլ ինչ ըղձացաւ առնուլ 'ի Տեառնէ։ քան զիմաստութեան շնորհս յարդարադատութիւն։ և շինեաց զտունն Աստուծոյ։ թէպէտ եւ յետոյ սխալեցաւ։

Զի՞նչ և զԵզեկիա հրաշափառագոյն եցոյց 'ի թագաւորութեան իւրում։ քան թէ 'ի բոլոր սրտէ յուսացաւ 'ի Տէր։ եբարձ զբարձունսն։ զբազմաժամանակեայ արձան շարութեան զօձն պղընձի՝ զոր արարն՝ խորտակեաց։ զոր մինչև ցայնժամ պաշտէին որդիքն Իսրայելի։ եւ անուանէին զանուն նորա Ներեստան։ վասն որոյ այսպիսի հաւատոյ յուսոյ և սիրոյ՝ որ առ Աստուած՝ յաղթանակ ընկալաւ զտէրութիւն 'ի վերայ թշնամեաց իւրոց։ և աղօթիւք հերքեաց զզօրսն Ասորւոյն Սենեքերիմայ։ եւ զանհրաժեշտ հրամանն Տեառն։ որ եհատ 'ի վերայ նորա զվիճակս մահու։ արտասուաւքն ընկրկեալ յետս նահանջեաց։ յաւել յաւելս իւր հնգետասան։ Ոչ փոքր ինչ արդեաք էր և Յովսիայ բարեպաշտութիւնն՝ որ իբրեւ էած առ նա Քեզկիան քահանայ զմատեան օրինացն թագուցեալ 'ի Տաճարին։ պատատեաց զպատմուճանն։ խընդրեաց 'ի բոլոր սրտէ զՏէր Աստուած Իսրայե-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լի։ Եւ առաքեաց նոա Ողդա կին մարգարէուհի ազաչել զՏէր եւ այնքան վրէժխնդիր եղեւ օրինացն, մինչ զի զսակերս ամբարշտելոցն հանեալ այրեաց 'ի վերայ գերեզմանացն իւրեանց։ Պատուեաց զպաշտօնեայսն Աստուծոյ և զքահանայս. զի այսու հաճեալ լինէր բարեպաշտութիւնն 'ի Թագաւորս որպէս եւ վասն Յովասու Թագաւորին ասէ Գիրն՝ Թէ. "Բարեպաշտեցաւ Յովաս որչափ լուսաւորեաց զնա Յովիդայ քահանայ և յաղթող գտաւ ամենայն ներհակաց իւրոց"։ Բաղումս եւ յոլովս գտցես 'ի Թագաւորսց այսու պայծառացեալ որպէս 'ի հնումն, այսպէս և 'ի նորումս Կոստանդիանոս, Թէոդոս. Տրդատ, և այլք, որովք յայտ է զի վայելուչ է ամենայն Թագաւորի ամբիծ հաւատով բեւեռիլ յերկիւղն Աստուծոյ և 'ի սէր. և Թէպէտ ստանալ յաշխարհին պէտս, փառս և բաղմութիւն զօրաց. զի ըստ Սողոմոնի. "Ի բազում զօրս փառք Թագաւորի, սակայն առնուն և 'ի փառսն Աստուծոյ ապաստան լինել ամենեցուն զանն 'ի բաց դարձուցանել և զնա միայն ճանաչել"։

Զի 'Թէ և այժմ ոչ է կռապաշտութիւն յատուկ, այլ յոլովք և բազումք, գոն պատրուակաւ. միմիայն զագահութիւն առցես, որ է երկրորդ կռապաշտութիւն, այլ և զամենայն հմայս եւ զնախագիտութիւնս։ Վասն որոյ

հարկ է թագաւորի, և ամենայն առն բարեպաշտի՝ յախտէս յայսմանէ 'ի բաց կալ։

Նախ յաստեղագիտութենէ, և յայնպիսեացն հմայողաց. ոչ միայն ամբարշտութիւն զայնպիսեացն դեգերմունն համարել, այլ և անմտութիւն յոյժ. քանզի թէ լաստ նոցուն ապացուցն՝ ծնեալքն յաստեղս շար և բարի գոն և 'ի նոցին հայեցողութենէ լինի աշխարհի լաւն և վատթարն. և եթէ ամենայն ինչ 'ի հարկէն ըստ բախտի եւ ըստ ճակատագրին լինի, ապա ո՛չ գոյ անձնիշխանութիւն։ Եւ անիրաւ են օրէնք և պատուիրանք՝ որ յԱստուծոյ է եղեալ՝ և իշխանաւորաց։ Զի զանկարելիսն հրաժարեցուցին, և ոչ է իրաւայի պատիժ չարագործաց եւ պատիւ բարեգործաց, ոչ ատ և ոչ 'ի հանդերձեալն։ Եւ զի՞նչ պիտոյ էր այլ օր և հատուցումն։ Եւ վասն էր մաղթել զԱստուած, և կամ զի՞նչ խնդրել 'ի նմանէ, այլ նոցա տալ պաշտօն՝ զոր կարեն առնել ինչ։ Այլ ուղղոց սրտից անարժան և ունայն համարին այսպիսի ասացութիւնք. եւ գիտել միայն զաստեղս՝ ըստ հրամանի գրոյն լինել լուսատու երկրի՝ եւ նշանս առուրց, ամաց եւ ժամանակաց և ամաց։ Եւ առաւել քան զայս խոտել կարծիս. ըստ որում ասաց Աստուած 'ի ձեռն Ովսէ մարգարէի. "Ես եմ Աստուած՝ որ հաստատեցի զերկինս և զօրս, այս է՝ զաս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առեղս ։ և ոչ ասացի քեզ երթալ զկնեռս նոցա »։ Եւ Եսայի հեգնէ , « Ո՞ւր են աստուածագէտքն քո՝ յայլիցեն և ապրեցուսցեն զքեզ »։ յետ որոյ և 'ի սոցունց ճանաչել արժան է զառուեստիւն աստուծանշմարիցս . զի ծնեալք իւրաքանչիւր ասող որպէսն նոքա ասեն . եւ յայլ և յայլ բախտ և ճակատագիր վիճակեալ։ Եւ 'ի միում ասն 'ի շարժէ սատակեցան , կամ 'ի միումն 'ի պատառումանէ երկրի ընկղմեցան , կամ 'ի մի նաւ ընկղմեցան . զի զոր ինչ հանդիպելի է՝ որ 'ի բազում բախտ ճակատագրեալ յայլ և յայլ աստեղս և 'ի մի վախճան առեն զկատարումն։

Զկնի սոցին զգուշութեանց արժան է ոչ ընդունել զքարընկէցս , զգարընկէցս , զբժահայեցս , զանբաղութիւս , զգարդիւթս , զհաւահմայս և զերդահմայս , և ըզկուիչս և զթուիչս , և զբաուաչիւն , և զբաշիւն անասնոց խտրեն . և զայլսն եւս , և ոչ միայն յայսցանէ , այլ և 'ի բարիոք կարծեցելոցն վիճակաց 'ի բաց լինել . բայց միայն թէ ազօթիւք խնդրել 'ի Տեառնէ վիճակաւ յայտնութիւն . որպէս եղեւ առ Յոսիանու , եւ 'ի վիճակաւ ընտրութեանն Մատաթիայ , եւ որպէս զերփուան կոտաւի առ Դաւիթ ։ Եւ զայսոսիկ ոչ փորձութեան ապաստաւ , զի գրեալ է . « Մի՛ փորձեսցես զՏէր Աստուածքո »։ այլ միայն վասն յայտնութեան ճշ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մարտութեանն։ Իսկ զայլ տեսակն թողուլ իբրեւ զվնասակարս, և զմասուն կուապաշտութեան, զի հմայքն մեղք են, ասէ Գիրն Աստուածային։

Եւ ըստ սասցելոցս զսրդարեալ թագաւոր գտանի ամենեցուն յաղթող. այլ և յամենայն իրս անուանի և փառաւոր. քաղի բարեպաշտութիւն և սէր առ Աստուած ոչ զթագաւորս միայն, այլ և զռամիկս անուանի գործէ. զի ուր էր և զի՞նչ բազմամբոխն Գսերքսէս առ ձկնորսն Յովհաննէս. եւ Դարեհ վշտասպեան՝ և Արտաշէս քաջ՝ առ ոկոպն Պօղոս։ Եւ զի մի զառաքեալսն 'ի նշանայն և 'ի պայծառագոյն վարուցն անուանիս և հռչակաւորս կարծիցես լինել։ Տե՛ս զեւան վստահագոյնս եւ բարեպաշտելոցն առ Աստուած անուանի եղեալ՝ ընդ աւետարանին խօսել ապրատառ զգործ նորա 'ի յիշատակ նորին։ Ցաս եւ խոնարհութիւն հռչակել՝ եւս բարձրագոյն գործէ զթագաւոր. որպէս նորին ընդգիմանին յերկիր անկեալ և նուաստագոյն. որ եւ երեւի առ Մովսէս՝ Փարաւոն, և Նաբուգոդոնոսոր՝ առ Դանիէլ. եւ Սենեքերիմ՝ առ Եզեկիայ. եւ յայլս յոլովս։ Ըստ որում Տէրն հրամայէ, "Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի, եւ որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի"։ Եւ առաքեալն Պետրոս թէ, "Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռամբն Աստուծոյ , զի զձեզ բարձրացուսցէ , 'ի ժամանակի » , զի « Թէ որ հպարտանայ 'ի դատաստան սատանայի անկցի » , որպէս եւ գրեալ է Պօղոս ։ Ցայտ է թէ՝ որ բարձր գոլով խոնարհեսցի , կցորդ փառաց լինցի այնմ՝ որ 'ի գերակայ բարձրութենէ փառացն թափեցաւ 'ի մեր նուաստութիւնս , և անճառ խոնարհութեամբ զկերպարանս ծառայի զգեցաւ ։ Ցոլով է խոնարհութեան քարոզք թագաւորաց ։

Ի ՎԱԽՃԱՆ բանիցս կամելով կատարումն առնել կանոնական խրատուցս , համարեսցուք մեծագոյն տուգանս կրել , եթէ զհարկաւորն և որ գլուխն է ամենայն բարութեանց լռեսցուք , որ է դատաստանի իրաւանցն բան ։ Զի թագաւոր , որ ինդրէ 'ի հաստատութեան կալ , զհետ երթիցէ արդար դատաստանի և ուղիղ իրաւանց՝ ըստ որում ասէ Սողոմոն . « Թագաւոր արդար կանգնէ զաշխարհս » ։ Եւ թէ « Թագաւոր որ արդարութեամբ դատի , աթոռ նորա 'ի վկայութիւն հաստատեսցի . և արդար դատաստան լինի՝ յերկայնագոյն քննութենէ » ։ Ճշկրիտ 'ի վերայ հասանել . մի հակիրճ և համառօտ առնել զիրաւունս , յաղագս ծանձրութեան եւ կամ յաղագս հատուս և սուբ երթեւեալս . քանզի զայս ոչ վայելէ մարդկան առնել որոց կարծո-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զաղտատ և կատկածամիտ է առեան դատաստանին . այլ մեծապէս քննութեամբ և աշխատասիրաբար հատուս լինել ։

Տե՛ս զամենագէտն , որ զանգործն տեսանէ՝ զի ասէր առ Աբրահամ թէ . « Աղաղակ Սոդոմայեցւոցն եւ Գոմորացւոցն եկ առաջի իմ . արդ իջեալ տեսից թէ ըստ աղաղակին՝ որ յիս հասանէ՝ վճարեսցե՞ն . ապա թէ ոչ , գիտացից » ։ Եւ ո՞յք էին՝ որ բողոքէին առ Աստուած զչար գործոցն Սոդոմայ , եթէ ոչ հրեշտակքն պահապանք նոցա . զի են կարգեալ յարարչէն ամենայն ազգի և անձին առհասարակ , որք ականեն զգործս մարդկան և հանեն առ Աստուած զչար և զբարի՝ որպէս յայտ է 'ի բազում գիրս ։ Եւ Տէրն իսկ ասէ թէ , « Մի՛ արհամարհէք զմի 'ի փոքրկանց աստի՝ զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է » ։ Եւ առ Կուռնէլիոս՝ իւր հրեշտակն ասէր . « Կուռնէլիէ՛ , աղօթք քո և ողորմութիւնք յիշեցան առաջի Աստուծոյ » . յայտ է թէ 'ի նմանէ ։ Այսպէս և Սոդոմայեցւոց հրեշտակքն բողոքեցին զչար գործոց նոցա և Աստուած իբրու կերպարանէր յերկրայս լինել ։ Արդ բողոքիչքն հրեշտակք՝ յորս ոչ գոյ նախանձ և ատութիւն . եւ ըստ Աստուած եւ 'ի քննութիւն իջանէր և որպէս տկար և ոսկաւաժամանակեայ յառնէ ամբարշտի լուեալ չարախօս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ութիւն՝ հաստատեսէ։ Ո՞վ ոչ գիտէ զմարդիկ։ զի ոչ խնայեն 'ի միմեանս։ Որ թէ քան զայլս գտանէին զօրեղագոյն՝ և 'ի վերայ Աստուծոյ յանդգնէին։ Ըստ որում գտցես զՀրէայս առ Քրիստոսիւ կատաղեալ։ Վասն որոյ ոչ է պարտ թագաւորի 'ի լսելն միայն հաւատալ շարախօսութեան. այլ յոյժ քննել որպէս և Աստուած զինքն օրինակ եդ դատաւորացն՝ քննելով զՍողոմայեցիսն։

Զի թէ թագաւոր սիրէ զառունկնաճառս և զարս մատնիչսն, յայն ամենն մարդիկ և զնոյն միշտ առնեն։ որպէս ասէ Սողոմոն. « Թագաւոր։ որ հաւանի բանից անօրէնութեան։ ամենեքեան՝ որ զնովաւ են։ անօրէնք են »։ Այլ 'ի լսելն զհակառակութիւն զմիմեանց։ երկայնմտութեամբ և հեզութեամբ լուիցէ. և բազմօքն քննեսցէ. և վկայիւքն ստուգեսցէ. այլ և աղօթիւք խնդրեսցէ 'ի Տեառնէ զյայտնութիւն իրին։

Եւ յոյժամ ըստ կարողութեան 'ի վերայ հասցէ իրաւանցն առանց խղճմտութեան և թերութեան, յայնժամ և ոչ ընդ միոյ իրաց մի՛ խափանեսցէ և վաճառեսցէ զճշմարտութիւնն։ Այլ և անփորձ գտցի արծաթոյ՝ որում ամոքլսէ. քանզի յաղթութիւն և ըղձատիւ ստանայ՝ որ զկաշառսն տայ։ Բայց զհոգին առողջն ապականէ, ասէ Սողոմոն։ Այլ թագաւոր՝ որ ախորժէ անսասանելի մը-

նալ յաւիտեան՝ կաշառ 'ի վերայ իրաւանց մի՛
առցէ, հետեւելով Դաւթի. «Զի հոգի այ-
րեսցէ զտունս կաշառառուացն», ասէ Յովել։
Այլ և մի՛ աշառեսցի 'ի մեծէ. զի ցրուեսա-
ցէ Աստուած զոսկերս մարդահաճոյից, ա-
սէ մարգարէն։ Եւ որ մարդկան հաճոյ լինի,
Քրիստոսի ծառայ չէ՝ գրէ Պօղոս։ Եւ մի՛
վասն աղքատութեան՝ յիրաւունսն գթասցի 'ի
անանկն. զի միապէս վճիռ եղ՝ որ ասացն.
«Մի՛ ակն առնուր հղօրին և մի՛ ողորմիր աղ-
քատին 'ի դատաստանի»։

Դարձեալ իրաւացի թագաւորի յիրաւունս՝
որք յինքն հասանին, ո՛չ միշտ խնդրել զինազան-
դեալսն, այլ և երբեմն ողորմութիւն խառ-
նել յիրաւունսն. զի զողորմութիւն և զճշ-
մարտութիւն պահապան թագաւորի ասէ Սո-
ղոմոն, և յողորմութիւն և յիրաւունս օրհ-
նեալքանի Աստուած. բայց առնել զողորմա-
թիւն արժան է ըստ տեղւոյ և ըստ պատշա-
ճի, զի յիւրոցն իրաւանց, որպէս վերագոյնս
ասացաք, որքան որ թողուցու՝ զիւրոցն գտա-
նէ յանցանաց թողութիւն՝ յարդար դատաս-
տանէն Աստուծոյ. ապա թէ այլ ընդ եղ-
բօր դատի, անդ ոչ է իրաւացի առնել ողոր-
մութիւն՝ զի այսու ոստիր նորա՝ լինի անի-
րաւութիւն, բայց թէ միջնորդ հաշտութեան
եղեալ համոզեսցէ զնոսա 'ի խաղաղութիւն
առանց իրաց շահու 'ի նոցանէ։ Զի անկար է

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թագաւորաց զամենայն իրս ինքեանմբ վճարել. վայելուցեն դատաւորս արդարակրօվս, անագահ բարս ունել։ Այլ՝ որք ատեցին զկըպարտութիւն, և մի՛ միայն զայն բաւական համարեսցին 'ի նոսա ձգել զիրիզՃ դատաստանին. և ապա կաշառ 'ի վերայ իրաւանց առնլով, և մեծապէս պահանջմանբն 'ի դատաւորացն զինչն՝ հարկել զնոսա յանիրաւութիւն, կամ 'ի դատաւորսն մի՛ ամենեւին զել եւ զմուտ ընչից յանձնել, այլ այլոց ինոյնն հաւատալ։ Եւ նոցա զբան իրաւանց եւ զդատաստանին միայն հոգալ։ Եւ կամ կշռել զծախս իւրեանց 'ի վերայ մըտոյն իւրեանց. և թէ աւելի հարկ հասցէ ինքեան գիտութեամբ ամենեցուն հաւասարաբար հանել յաշխարհէն՝ և զնոյն 'ի պէտս հասարակաց հանել և ոչ իւրոյ անձին։

Գլուխ Բանիս անհրաժեշտ ունել զքան խոստման և զգրաւական հրամանա, սիրել զըստուգութիւն և ճշմարիտ լինել յամենայնի, զի հրաման է Աստուծոյ լինել հաւատացելոցն 'ի նա այո՝ այո, և ո՛չն՝ ոչ. մանաւանդ թագաւորի, զի մի՛ ինչ ստութիւն ելցէ 'ի լեզուէ նորա, զի մարգարէութիւն 'ի շրթունս թագաւորի ասէ Սողոմոն. Եւ այսքան բաւականացի յաղագս թագաւորի։ Եւ արդ որպէս չէ բաւական առողջութիւն գլխոյ մի-

այն 'ի կատարելութիւն կենդանւոյ և ամենայն անդամոցն յարմարութիւն։ այսպէս և 'ի հաստատութիւն աշխարհի ընդ թագաւորի գեղեցկութեան և լաւութեան պիտանացու է և իշխանացն բարիոք գոլն։ Քանզի յերանելին Սողոմոնի զքաղաքս։ թագաւոր բարիոք ունելոյ։ և զիշխանաց եւս զարդարասիրաց յիշէ։ որպէս և յԵրուսաղէմ զթշուառութենէն Ճառէ։ զնորին վասն ըստ մտաց և ըստ մտրմանոյ մեանուկ գոլոյ նորին ապքայի և զիշխանացն եւս յիշէ՝ թէ։ Ընդ առաւօտս ուտեն։ այն է որովայնի ծառայեալք։ ընդ առաւօտս ուտեն և զհետս լինին գինւոյն եւ երեկոյեան 'ի նմին։ և 'ի գործս Տեառն ոչ հային։ որպէս ասէ Եսայի։ "Ոչ զգայասպեալք խորհրդոյ եւ զգահպանութեան աշխարհին"։ Վասն որոյ ըստ օրինի թագաւորի ամենայն բարիոք Ճանապարհի եւ գործառնութեան նախանձաւորք լինիցին։ նախ բարեպաշտութեամբ առ Աստուած պայծառանալ։ որպէս զի հաւատարմութեամբ երկնաւոր թագաւորին՝ հաստատուն երեւեցի հաւատարմութիւն երկրաւորս թագաւորի։ Զի որ երկնաւոր թագաւորին։ յորմէ զգոն ունի և զբարիոք գոն։ և զինի անցաւորիս զվերատին նորոգիլն և զյաւիտենական կեանն և զընդդիմաց ստոյգ զերծիլն և զպատուիրանս նորա ոչ զգահելով ոչ գոցի հաւատարիմ առնու։ զիարդ՝ երկրաւոր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թագաւորի հաւատարիմ գոյն։ յորմէ սակաւ ընդունի զբարութեան կամ զբարկութեան արկածս։ Նոյնպէս զարտ է նոցին խոնարհութեամբ եւ ամենայն առաքինութեամբ զարդարուն և բարեձեւ երեւիլ։ մանաւանդ սէր սերտ ունիլ առ թագաւորն և առ միմեանս։ Մի՛ նախանձ ընդ չարն և ընդ յառաջադիմութիւն իրերաց, և մի՛ մախանաք այրիլ, զիրեարս խածատել, և՝ի միմեանց սատակիլ։ Զի այս ախտ յոլովագոյն գտանի առ նոսին առ առաւելապէս։ յորժամ զընկեր զատուեալ տեսանիցեն, առ որս ասիցէ ոք թէ։ Այր դու, ընդէր նախանձով ծընգիս, և հաշիս ընդ բարձրանալ եղբօր քոյ։ թէ ախորժես հանգչել՝ անձին քում համարեա զնորին բարին։ այլ և սո՛ւ քեզ խորհրդակից զԱստուածաշունչ Գիրս՝ մանաւանդ զԴաւթին, և ոչ երկիցես։ “Յորժամ մեծանայ մարդ և բազում լինի փառք տան նորա ընդ նմա։ զի ոչ իջցեն ընդ նմա՝ ի գերեզման։ Զի մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր որպէս ծաղկիկ վայրի այնպէս ծաղկի։ շնչէ՝ ի նմա հողմ, և ոչէ և ոչ ևս երեւի տեղի նորա”։ և զայլս որ համազօր են նոցին։ Ապա թէ այսու ոչ հաւանիս և մեծագոյն զփառս և զփարթամութիւն կենցաղոյս կարծիցես, արա ընտրութեամբ հաւանութիւն և հանդարտութիւն մտաց քոց։ զի թէ նովաւ և նորին հնարիւք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

և ջանալով է յաջողու

անօրինին և առեցեալն յԱստուծոյ անկցի 'ի նա »։ Ասա զՄիքիայն. « Բարկութեան Տեառն համբերեցիս, զի մեղայ նմա ». ապա թէ աներ-կիւղ եւս 'ի նմանէ, թոյլ տուր անձին քում հանգչիլ. որովհետեւ սուր թշնամւոյ քո եւ մնաւ 'ի սիրտս իւր և աղեղունք նոցա փշրեցան։ Ապա թէ ախորժեա վրէժ առնուլ, թող այնմ. որ ասաց՝ « Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից ասէ Տէր ». և թէ « Ահ մեծ է անկանիլ 'ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ »։ Իսկ թէ ոչ հանգչիս, այլ բաղձաս գոռ ինքն փոխարէն առնուլ, զգոյշ լեր, մի գուցէ զայս առնելով 'ի մեծագոյն վնաս նորա անկանիցիս. զի իբրև զշուն յանդուգն լքեալ յայտնեսցի և անբերելի լիցի. այլ թող զնա շարշարել ինքեան կարծեօք և երկիւղիւ առ 'ի քէն, քանզի իբրու գիտէ զչարութիւն անձին իւրոյ՝ միշտ յերկիւղի է 'ի քէն և 'ի կատկածանս։

Արդ՝ մի՛ յայտնելով անհոգս առնէր զզնա։ Այլ և այսու առ մարդիկ արդար երեւեցիս և իմաստուն, և նա անզգամ և անմիտ. և դատաստան անաչառ ընկալցի սատմարմնով 'ի Տեառնէ և 'ի հանգերձեալն հոգւով և մարմնով։ Այլ և իշխանին պատշաճ է իմաստութեան պարարտել ոչ զինարբուսոց և լկտի երգոց կամ ունայն զբաղմանց խաղաց և որսոց, զի Գիրք զանմիտան և զան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընդել բարեն յորոցն նշանակեն որպէս ըզ-
հնէբրովիթն և զիսմայէլն և զՔասաւն վայրագ
և անմիտ համարելով։

Այդ ընդէր մարդ բանի և հանճարոյ հա-
սեալ, զօրհանապազ շանց և թռչնոց պա-
տապելով՝ կրել զասացեալն. «Մարդ 'ի պա-
տուի էր և ոչ իմացաւ. հաւասարեցաւ ան-
բանից և անմտից և նմանեցաւ նոցա»։ Մին-
չեւ յերբ և կարգ թռչնոց և գազանաց, և
զտիրագոյն մասանաւորն յայն վիճարել, որոց որ-
ժան էր օրհնել և հոգալ զպէտս հոգւոյ իւ-
րոյ և զաշխարհին, և մեծրմեւթեամբ ծա-
ռայել Աստուծոյ և թագաւորի։ Իսկ եկե-
ղեցականն գաստուց արժան է զաստուածային
օրէնս 'ի ժամու և 'ի տարաժամու յուսնկն
թագաւորի լուեցուցանել անեպատակաւ և ան-
ակն առնուլ. 'ի սահման թագաւորական ուղ-
ղութեան՝ զնա յորդորել, և զաշխարհ 'ի նո-
ցին հնազանդութիւն յորդորել։ Ուստեղ-
ծեալ ծառայել մարմնաւոր տէրն՝ որպէս Աս-
տուծոյ, և զամենայն հպարկս և զիրաւունս ա-
ռանց տրանջման յարքունիս վիճարել. այլ եւ
ինքեանք նոքաք հանդերձ արքայքն ազօթս և
պաղատանս աշխարհի և թագաւորի։ պարտ-
գայց ամօք մնալ 'ի խաղաղութեան։ Եւ այսո-
քիկ այսպէս։

Բայց գիտել արժան է՝ զի են երեք իրք, որ
հաստատուն պահեն զթագաւորութիւն։ Ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռաջինն այս , զոր գրեցաքս , բարեպաշտութիւն հաւատոյ՝ և ուղղութիւն գործոց . և երկրորդ՝ սեռական և հայրենեաց իրաւացի՝ 'ի նախնեաց ունել զթագաւորութիւն ։ Եւ երրորդ իմաստութեամբ և խոհականութեամբ վարել զնոյն ։

Արդ զառաջինն վասահ գոլով յԱստուած՝ յաստուածասէր և 'ի բարեսէր կամս մերոյ՝ պատկառոր Արքային Նուիրեցելոյ , ազգիս օ. ժանդակեացուք սմա լիով առնել զաստուածակալս և մշտնջենաւորիլ 'ի ոյն ։ Իսկ զերկրորդն յայտնապէս ունիլ սմա յոյժ ծանօթ՝ զի է մերս. զի է սա'ի Ռուբինեանց անտի , որ արեանաւոք էին մեծի տրքային Գագիկայ Բագրատունեաց Մամիկոնեաց . զի յետ մահուան նախասացեալ արքայիդ , եկեալ մեծն Ռուբէն՝ 'ի կաւս տարմախուամբ ժողովրդովք և տիրեալ անդ հանգեաւ 'ի Քրիստոս , ծնեալ զորդի Կոստանդին անուն . որ տիրեաց Փռիւգիոյ եւ եդ Տուն տէրութեան իւրոյ 'ի հուշակաւոր դղեակին Վահկայ . և կալեալ քաջութեամբ զյոլով մասն Կիլիկիոյ . և փոխեալ առ Քրիստոս ։ Էառ զինշխանութիւն նորա էրեց որդի նորա Թորոս , ունելով ընդ ինքեան զի զբայր իւր կրտսեր զԼեւոն ։ Սա՝ ընդարձակեաց զինշխանութիւն հօր իւրոյ . էառ և զմեծն Անարզաբա . և շինեաց զտաճար Տիրամօրն՝ որ 'ի Համանէ եդեալ անդ՝ և զնորին պատկերն ։ Եւ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հանգեալս 'ի Քրիստոս առաւել զնշխանութիւն եղբօր իւրոյ Լեւոնի, որ և ծնաւ երիս որդիս, զԹորոս, և զՍտեփանէ, և զՄլեհ. և եկեալ Պերիեռաժէն կայսրն 'ի Կիլիկիա ըմբռնեալ զԼեւոն, և զորդին իւր զԹորոս տարաւ 'ի Կոստանդնուպօլիս։ Եւ Ստեփանէ և Մելեհն յԵդեսիայ գնացեալ էին առ քեռին իւրեանց։ Մեռաւ Լեւոն 'ի Կոստանդնուպօլիս. և Թորոս եկն զկնի Պերիեռաժենի՝ 'ի Կիլիկիա։ Եւ յետ մահուան կայսերն՝ ելեալ յԱնարզաբա յորս էրէոց, 'ի խնամոյն Աստուծոյ գտեալ զեղբայրն իւր զՍտեփանէ. գարձեալ տիրեաց Կիլիկոյ և Ստեփանէ գնացեալ 'ի Սեաւ լեառն, տիրեաց մինչև 'ի Գերմանիկէ, և անդ մեռաւ 'ի ցուռնաց տապալեալ։ Եւ եթողեալ զորդիս զՌուբէն և զԼեւոն՝ որ առաջին ծնաւ թագաւոր Հայոց 'ի վերատին նորոգման թագաւորութեանն 'ի Կիլիկիա։ Բազում քաջութիւնս արարեալ Թորոսի և տիրեալ բոլոր Կիլիկիոյ և Սուրիոյ հանգեաւ 'ի Քրիստոս։ Եւ եղբայրն նորա Մլեհ էառ զնշխանութիւն նորին. և յետ նորա որդիքն Ստեփանէի. նախ Ռուբէն, և 'ի փոխանն առ Քրիստոս Լեւոն, որ զպատկերացաւ թագաւոր Հայոց՝ 'ի ցուռնաց և 'ի Հռոմայեցոց։ Եւ յետ նորա դուստր նորա Զապէլ թագուհի լծակցեալ ընդ բարեպաշտի Հեթումոյ թագաւորեալ. և բազում բարութիւնս

և ուզղութիւնս Հայոց ցուցեալ, ծնաւ զմեր-
ոյսս պատկառելոյս Լեւոն, որ այժմ օծանի թա-
գաւոր, որպէս զի լինել սմա՝ ըստ իշխանու-
թեան տասներորդ. 'ի Ռուբենայ։ Եւ ըստ ծը-
ննդաբանութեան եօթներորդ թուելով զայս
ձեւ օրինակի. իշխան Ռուբէն, իշխան Կոս-
տանդին, իշխան մեծն Թորոս Գրաւօտոս
Սեւասատան կոչեցեալ, իշխան Լեւոն, իշ-
խան Թորոս, իշխան Մլեհ, իշխան Ռու-
բէն, թագաւոր Լեւոն, Զապէլն թագուհի.
իսկ ըստ ծննդենէ սա որդի Զապելի դստեր
Լեւոնի աղքայի, որդւոյ Ստեփանէի, որդոյ
Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռու-
բէնի 'ի Շառաւեղէ Գագկայ յազգէ Բագրա-
տունեայ 'ի ցեղէն մեծին Դաւթի թագաւորի
և մարգարէի։ Իսկ զերբոյդն, որ նա ինքն է ի-
մաստութիւն և հանճար, այնքան ընկալեալ
ունի եւ զընդարձակութիւն սրտի մինչ զի
իբրեւ զայս հանճարեղական առ ամենեսեան
քարոզեալ է վասն որոյ ինձ լռելի է. զի մի
թուեցայց մարգահաճութեամբ իմն առա-
կանէ խօսիլ։ զոր գթութիւնն Աստուծոյ որ-
հեաց զոսա զաւակ սուրբ ուրախութեան։

Հանեալ յերկրէն Հնոցէն Եգիպտոսի՝ ելոյս
ծագեաց մեզ ոմինքորոյ ժողովրդեան իւրոյ
և այսոր կոչեաց յաշխարհ թագաւորութեան
տանս Թորգոմայ Հայկազեան զարմի զեռե-
ղելոցս 'ի նահանգս Սալբոյ եւ Միլիկիոյ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որոց սիրելի թագաւորն էաս։ Վասն որոյ մաղ-
թեացուք միաբան 'ի բոլոր սրտէ և յամենայն
անձնէ և 'ի զօրութենէ զերկնաւոր թագա-
ւորն մեր զՔրիստոս. զի շնորհեսցէ նորին-
ծայ մերոյ թագաւորի Լեւոնի զբարեպաշ-
տութիւնն Դաւթի. զԵզեկիայ. զՅովսիայ.
զԿոստանդիանոսի. զԹէոդոսի. զՏրդատայ.
զիմաստութիւնն Սողոմոնի և Զօրաբաբելի.
զԴանիէլի և զՅովսեփայ. զողորմածութիւնն
Աբրահամա և զՅոբայ եւ զխոհեմութիւնն
Իսահակայ և Իսրայելի. զհեզութիւնն Մով-
սիսի և զԴաւթի. զքաջութիւնն Սամսոնի
և զՏրդատայ և զամենայն բարեձեւութիւնս
ըստ նմանութեան բարեշարդ թագաւորացն,
որ 'ի հնումն և 'ի նորումս։ Կացցէ և մնաս-
ցէ անուն սորա ընդ արեւու յաւաղ քան
զարեւն յաղագէ մինչեւ յաղագ։ Ծագեսցի յա-
ւուրս սորա արդարութիւն բազում, խաղա-
ղութիւն մինչեւ կատարեսցի լուսին։ Տի-
րեսցէ սա 'ի ծովէ մինչեւ 'ի ծով, 'ի գե-
տոց մինչ 'ի ծագս աշխարհի։ Առաջի սորա
թշնամիք իւր անկցին, և զհող ոտից սորա լի-
զեսցեն։ Գոցէ սա շնորհ 'ի Տեառնէ առաջի ամե-
նայն բռնաւորաց աշխարհիս։ Եւ զամենայն
բարբառ, որ յարիցէ 'ի վերայ սորա, 'ի պարտ-
ութիւն մատնեսցէ Տէր։ Երկայն ամաք և
խաղաղական կենդանութեամբ, թագաւո-
րեսցէ սա 'ի կեանս յայս, ծիրանածին արգ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ամք իւրովք և զարմիս։ Եւ 'ի հանդերձեալ-
ն սրբոց թագաւորացն թագակից և աթո-
ռակից եղիցի։ Մի՛ պակասեսցի 'ի զաւակէ ս-
ւրա՝ այլ։ որ նստցի յաթոռ թագաւորութեան
ազգիս Հայկազեան։ Այլ ըստ աւուրց երկնից
որ 'ի վերայ երկրի և ըստ պայծառութեան
լուսաւորացն եղիցի մշտնջենաւորութիւն զա-
ւակաց սորա և պայծառութիւն աշխարհի։
Ի փառս և 'ի պատիւ Եկեղեցւոյ Աստու-
ծոյ՝ և հաւատացելոց Քրիստոսի։ ընդ գըլ-
խոյս շնորհաբաշխութեան և ամենայն անդա-
մոցս յարմարութեան շնորհեցի յառաստա-
պարգեւ Տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ
շնորհք ողորմութեան։ և պարգեւք բարու-
թեան։ նախ քահանայական լրութեան։ և քա-
հանայականին կարողութեան։ անբիծ Հայ-
րապետիս մերոյ։ պարկեշտ պաշտամամբ ըս-
պասաւորել աստուածային խորհրդոյս յեկե-
ղեցի սուրբ 'ի յերկրի։ Գթութիւն մարգա-
սէր Հոգւոյն Աստուծոյ հանգիսէ 'ի հոգիս
ննջեցելոցն մերոց և յարուցէ զնոսա 'ի կեա-
նդս և 'ի հանգիստն յաւիտենական։ մանա-
ւանդ զնախայիշատակեալ հոգանիս մերս Զը-
սակաւորի։ զՈՒրբինեանն՝ յորոց երանելին
Զապէլ թագուհի։ որոյ ողորմութեանն և ա-
ռատ պարգեւայն։ որ առ ուսումնականն՝
պտուղ է մերս նուաստութիւն և 'ետ վերհա-
գաւանից քան զմեզ՝ ընդ որում զանձատ բարու-

թիւնան ընկալցի փոխարէն 'ի հանդերձեալ հաստատման արդարոց։ և ձեզ ամենեցուն լաղացդ շնորհեսցէ Տէր վարձս բարեաց։ որպէս զի յամենեցունց փառաւորեսցի՝ Միանական Սուրբ Երրորդութիւնն և մի Աստուածութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2017-11-07 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY
Los Angeles
This book is DUE on the last date stamped below.

Generated on 2017-11-07 11:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2017-11-07 11:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000070938
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA